11. Roche L., Danieli C., Belot A., Grosclande P., Bouvier A.M., Vehen M., Remonted L., Bossard N., Cancer net survival on registry data: use of the new unbiased Pohar-Perme estimator and magnitude of the bias with the classical method // Int. J. Cancer, 2013, 132(10). P. 2359-2369

ԱՄՓՈՓՈՒՄ

ԹՈՔԻ ԶԱՐԳՅԵՐԻ «ԱՊԱԳԱՆ». ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հովհաննիսյան Մ.Գ.

ԵՊԲՀ, հիգիենայի և էկոլոգիայի ամբիոն

Բանալի բառեր՝ թոքի բաղցկեղ, հիվանդացության ցուցանիշներ, հիվանդացության կանխատեսում:

Աշխատանքում բնարկվում է թոքի բաղցկեղով (ԹԶ) հիվանդացության կանխատեսման հնարավորությունը: Ուսումնասիրված են.

- ◆ 2005-2013թթ. ԹԶ-ի հիվանդացության շարժընթացը (դինամիկան), նշված է տարբեր մարզերում հիվանդացության մակարդակի ժամանակային և աշխարհագրական բազմազանությունը:
- ◆ Կումուլյատիվ (կուտակային) ցուցանիշը. մահվան այլ պատճառների բացակայության դեպքում 74 տ. (միջին տարիք) հասնելու դեպքում տղամարդկանց շրջանում ԹԶ-ի զարգացման ռիսկը կազմում է 6,23%, կանանց շրջանում՝ 0,64%:

◆ Ցուցանիշը, որը ցույց է տալիս որոշ շրջաններում հիվանդացող մարդկանց բանակը. 9 տարում՝ ավելի քան 10 000:

◆ Ինցիդենտությունը. ԹԶ-ի առաջացման հավանականության առկայությամբ անձանց շրջանում դեպքերի առաջացման հաճախականությունը կենտրոնների հանքարդյունաբերության և հանքամշակման արդյունաբերության օրինակով: Ցույց է տրված՝ Գյումրի՝ 8,7, Արթիկ՝ 25,2, Մարալիկ՝ 20,02, Անիպեմզա՝ 21,6, Պեմզաշեն՝ 23,22 այդ բաղաժանանի 100 000 բնակչի հաշվով:

ԹԶ-ի հիվանդացության ընդհանուր աճը և աճի միջին ընթացքը կազմում են 11,6% և 12,3% համապատասխանաբար: 2022-ին ենթադրյալ կանխատեսմամբ ԹԶ-ի Նոր դեպքերի թիվը կհասնի 1500-ի: Սակայն 10 տարվա կանխատեսման դեպքում սխալները սովորաբար հասնում են 2,7 – 9%-ի:

SUMMARY

THE “FUTURE” OF LUNG CANCER IN ARMENIA: ESTIMATES OF THE CANCER INCIDENCE RATE

Hovhannisyanyan M.G.

YSMU, Department of Hygiene and Ecology

Keywords: lung cancer, incidence rate, incidence forecast.

The article raises the question of the possibility of predicting the incidence of lung cancer (LC) in the country. The following issues are studied:

- ◆ Dynamics of lung cancer incidence during 2005-2013, the time and the geographical diversity of the incidence rate in different marzes is indicated.
- ◆ Cumulative incidence rate: risk, indicating that in the absence of other causes of death at the average age of 74 the risk of developing lung cancer among males is 6.23%, and among females - 0.64%.
- ◆ Ratio showing the proportion of people, who develop cancer

over certain period: during 9 years - more than 10 000.

◆ Incidence is the frequency of cases among people that have the possibility of lung cancer development on examples of the centers of mining and manufacturing industries. It has been shown that in Gyumri the incidence is 8.7, in Artik - 25.2, in Maralik - 20.02, in Anipemza - 21.6, in Pemzashen - 23.22 per 100 000 population of these centers.

Overall increase and the average increase rate of lung cancer incidence is 11.6% and 12.3%, correspondingly. Estimated forecast is that in 2022 the number of new cases of lung cancer reaches 1500. However, 10 – year forecast errors tend to reach 2.7 - 9%.

УДК: 613.1:614.2 (479.25) +616.24 – 006.6

ОКРУЖАЮЩАЯ СРЕДА И ЗАБОЛЕВАЕМОСТЬ РАКОМ ЛЕГКОГО: НА ПРИМЕРЕ ШИРАКСКОГО МАРЗА

Оганесян М.Г.

ЕГМУ, Кафедра гигиены и экологии

Ключевые слова: окружающая среда, рак легкого, заболеваемость, Ширакский марз.

Настоящая работа является фрагментом исследования медико-гигиенической обусловленности заболеваемости раком в Армении.

Учитывая, что как первичная, так и вторичная профилактика рака основываются на информированности об этиопатогенетических факторах, ответственных за возникновение и частоту его среди отдельных контингентов населения и в различных регионах, медико-географические методы исследования приобретают актуальное значение. С их помощью устанавливаются закономерности распространения отдельных форм рака, что позволяет решать и разрабатывать противо-раковые мероприятия более целенаправленно [2, 3, 6].

Разработка региональных программ профилактики рака с целью снижения заболеваемости и смертности от злокачественных новообразований имеет в настоящее время актуальное народно-хозяйственное значение. В наибольшей степени это касается тех локализаций рака, которые, являясь наиболее распространенными на данной территории, имеют тесную связь с факторами внешней среды, в частности – рака легкого. В связи с этим, проблема рака легкого приняла не только медицинский, но и социальный характер.

В предыдущих работах [7, 8, 9] была дана картина этапов суммарной заболеваемости и смертности от рака различной локализации во всех марзах страны. С целью более углубленного изучения мы сочли целесообразным перейти к медико-географическому картографированию, в частности, наиболее "онкоопасных" зон.

Целью настоящей работы явилось выявление медико-географической сопряженности рака легкого и факторов внешней среды в Ширакском марзе.

Задачами исследования явились:

1. Статистическое изучение заболеваемости раком легкого населения Ширакского марза, в частности:
 - ♦ относительных показателей заболеваемости;
 - ♦ тенденций на основе динамического ряда этих показателей за определенный период времени (с 2005 по 2013 гг.);

2. Территориальное распределение различных уровней частоты заболеваемости раком легкого;
3. Изучение природно-экономических условий с выделением факторов, определяющих высокий уровень заболеваемости.

Материал и методы

В ходе исследования были использованы данные статистического отдела Национального центра онкологии (абсолютные числа впервые установленного диагноза), Государственного комитета кадастра недвижимого имущества при правительстве Армении, Министерства экологии РА.

Исследование проводилось в несколько этапов.

Этап 1-й включил изучение первичной (впервые установленный диагноз) заболеваемости раком "ранговых" локализаций (рака легких, желудка, печени, поджелудочной железы, толстой и прямой кишок, мочевого пузыря, предстательной железы, молочной железы, шейки матки, тела матки и яичников) в динамике за период от 2005 до 2013 года по всем 10 марзам Армении (города и села) с целью выявления региона с наиболее высокими показателями онкологической заболеваемости (ОЗ).

Были рассчитаны показатели заболеваемости с 2005 по 2013 год и выведен средний показатель. На административную карту Армении были вынесены показатели ОЗ для каждого марза.

Этап 2-й заключался в изучении динамики рака вышеуказанных локализаций в отдельности с целью определения тех локализаций, которые занимают первое место в течение всего периода наблюдения в выделенном марзе. Все расчеты проводились в пересчете на 100 000 населения (всего, городского и сельского).

Этап 3-й охватил работу по изготовлению картосхемы распространения известных или предполагаемых этиологических факторов или их комплексов на территории Ширакского марза. Предварительно было изучено медико-географическое состояние территории (физико-географические условия, народонаселение, промышленность и сельскохозяйственное производство).

Этап 4-й был посвящен установлению закономерностей во взаимосвязи между частотой заболеваемости и влиянием факторов внешней среды. Для выявления указанных закономерностей был использован метод сопоставления и наложения карт, т.е. сопряженного картографирования, обобщения полученных данных картографического анализа с выделением ведущих факторов или их сочетаний, которые могли быть ответственны за уровень рака в данной местности. Была также изучена загрязненность территориальных речных вод марза, используемых в сельском хозяйстве в качестве поливочных.

Результаты и обсуждение

Распределение суммарной ОЗ представлено на административной карте Армении.




Рис. 1 Распределение суммарной заболеваемости раком ранговых локализаций с 2005 по 2013 гг. (на 100 000 населения)

Как следует из рисунка, Ширакский марз по ОЗ занимает второе место после Лорийского марза.

Анализ суммарной заболеваемости и смертности от рака в марзе за 2002-2011 годы показал, что первичная заболеваемость за 10 лет увеличилась на 21,3%, первичная смертность- на 50,2%, общая смертность- на 44,6% (рис. 2).

Непрерывный рост показателей за 2002-2011 годы послужил основой для составления картограммы по состоянию на 2012 год (рис. 3).




Рис. 2. Этапы роста показателей впервые установленного диагноза, первичной и общей смертности с 2002 по 2011 гг. в Ширакском марзе (на 100 000 населения)




Рис. 3 Промышленные предприятия и распространенность рака легкого в городах Ширакского марза по состоянию на 2012 г. (на 100 000 населения)

Ширакский марз: центр – Гюмри, расстояние до Еревана – 115 км, связь – шоссейная дорога, площадь– 2691 км², общее число населения- 130 326 человек, из которых 77 781- горожане, 52,545– сельчане. Климат Ширакского марза достаточно суров, его даже сравнивают с климатом российских степей. Средняя температура довольно низкая, а Ашотскую котловину вообще считают “армянской Сибирью”. Несмотря на то, что в Шираке весной и летом дожди не так уж и редки, ветры, дующие с окружающих гор и возвышенностей, иссушают почвы, поэтому нужда в орошении очень велика. Единственным источником оросительных вод является река Ахурян, которая пересекает Ширакскую равнину с севера на юг. С этой же целью используются воды озера Арпи [1].

Еще в 1988-1993 гг. марз отличался ненормированным сбросом сточных вод в открытые водоемы и сильным загрязнением открытых водоемов нитратами, нитритами, нефтепродуктами.

В марзе располагаются промышленных предприятий – 95, сельскохозяйственных – 28 151 (зерновые и кормовые культуры, сахарная свекла) [1].

Гюмри – второй после Еревана город Армении, был разрушен во время землетрясения 1988 года; в результате этого прекратили существование многие промышленные предприятия. В настоящее время в Гюмри развито производство стройматериалов, станкостроение, выработка гранита и туфа.

Производство стройматериалов занимает в марзе особое место: его центром являются город Артик и поселок Анипемза, расположенный недалеко от реки Ахурян. Здесь добывается пемза высокого качества, которая затем используется в качестве шлифовочного материала и добавок к цементу [1].

В Артике и поселке Пемзашен развиты добывающая (туф, шлак, пемза, базальт) и на ее основе – обрабатывающая промышленность. Таким образом, наиболее опасным канцерогенным промышленным ингредиентом является выбрасываемая в атмосферу мелкодисперсная пыль (МАИР). По данным Министерства охраны природы концентрация пыли в атмосферном воздухе превышала предельно допустимые дозы в 1,8-1,7 раза в период за 2011- 2012 годы [4, 5], а в отдельные месяцы (январь, февраль, июнь, октябрь, ноябрь и декабрь) – в 2 раза. Согласно тем же данным, концентрация SO_2 и NO_2 была “в пределах нормы”.

В связи с тем, что для ведения сельскохозяйственных работ в Ширакском марзе необходимы поливочные воды изучена загрязненность поверхностных вод реки Ахурян ионами металлов и неметаллов в различных участках реки за 2011-2012 годы. И наконец, Ширак связан со всеми регионами страны крупнейшими автомагистралями, а главный город – Гюмри отличается интенсивным автотранспортным движением, что способствует выбросу в атмосферу веществ, оказывающих канцерогенное действие. Особенно опасно совместное действие пыли и этих веществ, которое проявляется даже при низких их концентрациях. В 2011 году наблюдалось превышение предельно допустимых концентраций (ПДК) алюминия в 9,4 раза; ванадия – в 9,0 раз; меди – в 4,0; хрома – в 3,0; магния – в 3,5 раза; ионов нитрита – в 5,9; ионов аммония – в 5,8 раза. В 2012 году ПДК алюминия превышала в 11,1 раза; ванадия – в 10,1; меди – в 2,9; хрома в – 8,6; магния – в 2,5; селена – в

2,6 раза. В водах озера Арпи в 2011 году было зарегистрировано превышение ПДК алюминия – в 16,6 раза; ванадия – в 8,0; меди – в 5,0; хрома – в 2,0; железа – в 1,9 и магния – в 5,6 раза. В 2012 году ПДК алюминия превысили в 27,6 раза; ванадия – в 7,9; меди – в 2,8; хрома – в 4,3; железа – в 2,0; магния – в 4,9 раза [4].

Давно установлено, что в городской местности основными факторами риска являются: курение; высокие концентрации загрязнений атмосферного воздуха пылью; сернистым газом; окислами углерода; наличие множества автомагистралей; длительное проживание в районах промышленных предприятий, являющихся источниками загрязнения атмосферного воздуха; работа на предприятиях в условиях запыленности мелкодисперсной цементной пылью, общей высокой запыленностью и загазованностью; а также тяжелый физический труд. Значение имеет и климатический фактор, способствующий не только большей концентрации вредных веществ в воздушном бассейне городов, но и частой заболеваемости; в сельской местности факторами риска являются: курение, работа в условиях производства, связанного с высокой запыленностью зерновой, почвенной, соломенной пылью и ядохимикатами; и наконец, климатический фактор (пылевой, простудный). Причиной высокой заболеваемости раком легкого в отдельных сельских районах является к тому же дополнительное влияние вредных факторов промышленного производства, расположенного на их территориях.

Безусловно, все факторы становятся особенно канцероопасными в сочетании с курением – основным фактором риска развития рака легкого.

Заключение

Региональные и национальные целевые Программы профилактики рака должны сочетать мероприятия по устранению причин, способствующих его возникновению, и по организации профилактического обследования населения с целью активного выявления ранних форм рака соответствующих локализаций, т.е. мероприятия первичной и вторичной профилактики. Залогом первичной профилактики рака является устранение причин, способствующих его возникновению. Эти неблагоприятные факторы и являются основой для разработки профилактических мероприятий по снижению величины показателей данного заболевания. К ним относятся мероприятия по снижению частоты курения, загрязнения внешней среды, охране труда на производстве и т.д. Все они осуществляются санитарно-гигиенической службой в масштабах городов, республик, стран

и регламентируются соответствующими государственными постановлениями.

Из этих мероприятий наиболее распространены являются: вывод промышленных предприятий и крупных магистралей, являющихся интенсивными источниками загрязнения атмосферного воздуха, из селитебной зоны в загородные промышленные зоны; пересмотр норм ПДК содержания вредных веществ как в производственных помещениях, так и в атмосферном

воздухе; пересмотр размеров санитарно-защитных зон вокруг источников загрязнения атмосферного воздуха; контроль за соблюдением норм и качества строительства, технологических процессов, планируемых методов очистки производственных выбросов; правильный научно-обоснованный выбор территорий под строительство тех предприятий, аварии или технологические нарушения на которых чреваты развитием экологической катастрофы.

ЛИТЕРАТУРА

1. Հայաստանի ազգային ատլաս // ՀՀ Կառավարության ամբիթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե. – Հատոր Ա. – 2007. – 229 էջ: (Национальный атлас Армении // Государственный комитет кадастра недвижимого имущества при правительстве Армении. – 2007. – Т.1 – 229с.)
2. Агарков Н.М., Забровский А.Н., Шаманов А.В. Исследование заболеваемости злокачественными новообразованиями на основе математико-картографического анализа // Системный анализ и управление в биомедицинских системах. – 2010. – Т.9. – 1. – С.106-108.
3. Разработка противораковых мероприятий на основании медико-географических карт территориального распределения различных уровней заболеваемости раком // Организация онкологической службы в России (методические рекомендации, пособия для врачей). Под редакцией В.И. Чиссова, В.В. Старинского, Б.Н. Ковалева. – Часть 2. – Москва. – 2007. – С. 11-18.
4. Справка о состоянии поверхностных вод и воздушного пространства населенных мест // Министерство экологии. – Армэкомониторинг. – 2011. – 56с.
5. Справка о состоянии поверхностных вод и воздушного пространства населенных мест // Министерство экологии. – Армэкомониторинг. – 2012. – 74с.
6. Чимитдоржиева Т.Н., Кременецкий И.Г. Экологическая ситуация и заболеваемость населения злокачественными опухолями // Российский онкологический журнал. – 2008. – 2. – ч.1. – С.41-49.
7. М.Оганесян. Медико-гигиенические подходы к изучению заболеваемости раком (на примере Еревана) // Вопросы теоретической и клинической медицины. – 3 (79). – Ереван. – 2013. – С. 5-9.
8. Оганесян М.Г. Медико-гигиеническая обусловленность онкологической заболеваемости и смертности в Армении. Сообщение // ЕРГМУ, «Медицина, наука и образование» научно-информационный журнал. – Ереван. – 2014. – 17. – С.81-89.
9. Оганесян М.Г. Медико-гигиеническая обусловленность онкологической заболеваемости и смертности в Армении. Сообщение II // ЕРГМУ, «Медицина, наука и образование» научно-информационный журнал. – Ереван. – 2015. – 18 – С.82-86.

ԱՄՓՈՓՈՒՄ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԸ ԵՎ ԹՈՔԻ ԲԱՂՑԿԵՂՈՎ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հովհաննիսյան Մ.Գ.

ԵՊԲՀ, հիգիենայի և էկոլոգիայի ամբիոն

Բանալի բաներ՝ շրջակա միջավայր, թոքի բաղցկեղ, հիվանդացություն, Շիրակի մարզ:

Աշխատանքում լուսաբանված են ուռուցքային հիվանդացության (ՈՐ) ուսումնասիրության ժամանակակից մոտեցումները: Էությունը բժշկա-աշխարհագրական քարտեզագրումն է: Ներկայացված է Հայաստանի վարչական քարտեզը, որի վրա նշված է գումարային ուռուցքային հիվանդացությունը (կարգային տեղակայումներ) 2012-ին: Առանձին ներկայացված է

Շիրակի մարզի քարտեզը, որտեղ նշված են թոքի բաղցկեղով հիվանդացության և արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման զուգորդվածությունը: Ուշադրություն է դարձված մակերեսային ջրերի աղտոտվածությանը (գ. Ախուրյան և Արփի լիճ), որոնք գործնականում գյուղատնտեսական հողերի ոռոգման միակ աղբյուրն են: Հարց է առաջանում տարածքային ծրագրեր մշակելու անհրաժեշտության վերաբերյալ:

SUMMARY

ENVIRONMENT AND LUNG CANCER INCIDENCE RATE IN SHIRAK MARZ

Hovhannisyan M.G.

YSMU, Department of Hygiene and Ecology

Keywords: environment, lung cancer, incidence, Shirak Marz.

The paper highlights the issues of the modern approach to the study of cancer incidence. It is presented through medical-geographical mapping. The overall cancer incidence rate is presented on the administrative map of Armenia by localizations as of 2012. Separately, a map of Shirak Marz is presented. The map

indicates relationship between lung cancer incidence and distribution of industrial enterprises. Attention is paid to pollution of surface water of the Akhurian river and the Arpi lake. They are practically the only source for irrigation of agricultural lands. There is a need to develop regional programs to decrease cancer incidence in the region.

ՀՏԴ. 613.956:616_007 (479.25_25)

ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԴԵՌԱՅԱՍ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ

Մկրտչյան Ս.Յ., Խաչիկյան Ն.Զ., Զոհարովա Ս.Գ., Գալստյան Լ.Կ.
ԵՊԲՀ, հիգիենայի և Էկոլոգիայի ամբիոն

Բանալի բառեր՝ դեռահասներ, բաշի տատանումներ, ֆիզիկական զարգացման տեմպեր:

Արդիականությունը. երեխաների և դեռահասների առողջական վիճակը գնահատվում է ոչ միայն հիվանդության առկայությամբ կամ բացակայությամբ, այլև ֆիզիկական զարգացման ներդաշնակությամբ: Այն բնութագրում է օրգանիզմի մորֆոֆունկցիոնալ վիճակը, որն աճի և զարգացման պրոցեսի չափանիշ է ամեն կոնկրետ տարիքում [12]:

Երեխաների և դեռահասների օրգանիզմում զարգացման պրոցեսներն անավարտ են, օրգանիզմը հասունացման շրջանում է, որը բնորոշվում է աճի և զարգացման պրոցեսներով: Օրգանիզմի աճն ու զարգացումը կատարվում են գենետիկ ծրագրին համապատասխան, բայց նրա ձևավորման վրա ազդում են նաև բազմաթիվ միջավայրային և սոցիալ-տնտեսական գործոններ՝ կենցաղային պայմանները, սնունդը, աշխատանքի և ուսման պայմանները, առողջ ապրելակերպի պահպանումը և այլն [3, 10, 11, 13, 14]:

Աճի և զարգացման ընթացքում օրգանիզմը ենթարկվում է արագընթաց մորֆոֆունկցիոնալ փոփոխությունների, որի հետևանքով այն շատ զգայուն է միջավայրի թե՛ բարենպաստ և թե՛ անբարենպաստ գործոնների ազդեցության նկատմամբ: Այդ ազդեցությունը նշանակալիորեն անդրադառնում է ֆիզիկական զարգացման վրա: Ֆիզիկական զարգացման ցուցանիշների դինամիկ ուսումնասիրությունը և համեմատումը տարածաշրջանային և տարիքասեռային խումբների հետ թույլ է տալիս գնահատել ֆիզիկական զարգացման շեղումները, որոնք իրենց հերթին սովորաբար զուգակցվում են առողջական վիճակի շեղումներով: Երեխաների և դեռահասների առողջական վիճակն ուսումնասիրող գրեթե բոլոր ծրագրերում ընդգրկվում է ֆիզիկական զարգացման գնահատումը՝ սկսած զանգվածային հետազոտություններից մինչև առանձին անհատականական վիճակների ուսումնասիրություն:

Գիտականներն ապացուցել են, որ մարդու մարմնի չափերը, նրա աճի և զարգացման տեմպերը տասնամյակների ընթացքում ենթարկվում են ավիթանոս փոփոխությունների: Հայտնի են ակսելերացիայի և դեցելերացիայի երևույթները, որոնք բնութագրվում են հա-

մապատասխանաբար՝ աճի և զարգացման տեմպերի արագացմամբ կամ դանդաղեցմամբ: Ակսելերացիայի հետ կապված նկատվում են օրացուցային և կենսաբանական տարիքների անհամապատասխանություն, մի շարք հիվանդությունների նկատմամբ հակվածության մեծացում, որը պայմանավորված է օրգանիզմի հարմարվողականությունն ապահովող մակերիկամների ֆունկցիայի ընկճմամբ [1]:

Դպրոցականների շրջանում կատարված ժամանակակից բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ դեռահասների ֆիզիկական զարգացման մակարդակի անբարենպաստ միտում կա [2, 4, 5, 6, 7, 9]:

Այս ամենից հետևում է, որ դեռահասների ֆիզիկական զարգացման անթրոպոմետրիկ ցուցանիշների տարածաշրջանային և տարիքասեռային չափանիշները պետք է պարբերաբար (առնվազն 8-10 տարին մեկ) թարմացվեն [10]:

Բազմաթիվ մասնագետների աշխատանքներ ապացուցում են, որ իրենց տարիքին համապատասխան ֆիզիկական զարգացում ունեցող դեռահասների առողջական վիճակն ավելի բարվոք է, իսկ աններդաշնակ ֆիզիկական զարգացում ունեցող երեխաների շրջանում գրանցվում է հիվանդացության բարձր մակարդակ [10]: Հաշվի առնելով վերը նշվածը՝ դեռահաս ազգաբնակչության ֆիզիկական զարգացման մակարդակի գնահատումը շատ կարևոր է և արդիական:

Նպատակը. հետազոտության նպատակն է գնահատել Երևան քաղաքի 11-16 տարեկան երեխաների ֆիզիկական զարգացման տեմպերը:

Նյութը և մեթոդները. հետազոտությունն իրականացվել է Երևանի «Մուրացան» և «Հերացի» պոլիկլինիկաներում: Ուսումնասիրվել են 11-16 տարեկան 303 տղաների և 293 աղջիկների ֆիզիկական զարգացման անթրոպոմետրիկ ցուցանիշները: Ուսումնասիրվել են երեխաների հասակը, մարմնի զանգվածը, մարմնի զանգվածի ցուցիչը (ՄՀԶ) և գնահատվել է նրանց ֆիզիկական զարգացումը: Ֆիզիկական զարգացումը գնահատվել է ռեգրեսիայի սանդղակների մեթոդով: Երեխաների հասակը համեմատվել է սանդղակի հասակային ցուցանիշի հետ, ապա՝ վերլուծվել ըստ զանգվածին համապատասխանության: Քանի որ ռեգրեսիոն սանդղակների մեթոդով հնարավոր է գնահատել ան-

Աղյուսակ 1.

Երևան քաղաքի 11-16 տարեկան երեխաների ֆիզիկական զարգացման տեմպերը (%).

Տարիք		11 տարեկան	12 տարեկան	13 տարեկան	14 տարեկան	15 տարեկան	16 տարեկան
Ֆիզիկական զարգացման խմբեր	Տղաներ	ցածր	0	0	1,8	5,3	6,8
		միջինից ցածր	0	7	14	15,8	16,3
		միջին	70,8	56,1	57,9	52,6	51
		միջինից բարձր	25	19,3	17,5	14	8,2
		բարձր	4,2	17,5	8,8	12,3	18,4
	Աղջիկներ	ցածր	0	9,7	6,5	8,2	2,5
		միջինից ցածր	0	11,3	13	14,8	11,4
		միջին	85,7	46,8	60,9	54	70,9
		միջինից բարձր	14,3	12,9	10,9	3,3	12,7
		բարձր	0	19,4	8,7	19,7	2,5

Աղյուսակ 2.

Մարմնի զանգվածի ցուցիչը 11-16 տարեկան տղաների և աղջիկների շրջանում.

Տարիք	Մարմնի զանգվածի ցուցիչ					
	տղաներ			աղջիկներ		
	ցածր	նորմալ	բարձր	ցածր	նորմալ	բարձր
11	4,2%	58,3%	37,5%	0%	85,7%	14,3%
12	8,8%	70,2%	21,1%	17,7%	64,5%	17,7%
13	3,5%	70,2%	26,3%	10,9%	71,7%	17,4%
14	5,3%	73,7%	21,1%	9,8%	72,1%	18%
15	15,3%	61%	23,7%	2,5%	88,6%	8,9%
16	6,1%	79,6%	14,3%	12,9%	77,4%	9,7%
Ընդհանուր	7,6%	69,6%	22,8%	16,4%	76,1%	14,3%

թրոպոմետրիկ 2 ցուցանիշների՝ հասակի և մարմնի զանգվածի ֆիզիոլոգիական պայմանավորվածությունը, նրանց կորելյացիոն կապը, ուստի այն առավել լիարժեք է և այժմեական:

Երեխայի ֆիզիկական զարգացումը գնահատելու համար նախ որոշվել է նրա օրացուցային տարիքը, երեխան տեղավորվել է համապատասխան տարիքային խմբում, ապա օգտվելով ֆիզիկական զարգացման տարիքասեռային չափանիշների սանդղակից՝ ֆիզիկական զարգացումը գնահատվել է 5 մակարդակներում՝ միջին, միջինից ցածր, ցածր, միջինից բարձր, բարձր:

Արդյունքները. հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ ֆիզիկական զարգացման միջին ցուցանիշ ունեին 342 երեխա (հետազոտվածների 57,4%-ը): 77-ի դեպքում (12,9%) ֆիզիկական զարգացումը գնահատվեց միջինից ցածր, 28-ի դեպքում (4,7%)՝ ցածր, 78-ի դեպքում (13,1%)՝ միջինից բարձր, 71-ի դեպքում (11,9%)՝ բարձր (աղյուսակ 1): Կատարված վերլուծությունից պարզվեց, որ ֆիզիկական զարգացման միջին տեմպեր արձանագրվել են տղաներից 167-ի (55,1%), միջինից ցածր՝ 40-ի (13,2%), ցածր՝

11-ի (3,6%), միջինից բարձր՝ 46-ի (15,2%) և բարձր՝ 39-ի (12,9%) շրջանում: Ֆիզիկական զարգացումը միջին էր 175 աղջիկների (59,7%), միջինից ցածր՝ 37-ի (12,6%), ցածր՝ 17-ի (5,8%), միջինից բարձր՝ 32-ի (10,9%) և բարձր՝ 32-ի (10,9%) շրջանում: Տարիքային խմբերի վերլուծությունը նկարագրված է աղյուսակ 1-ում:

Մեզ հետաքրքրում էր նաև, թե ինչպիսի շեղումներ կարող էին արձանագրվել անթրոպոմետրիկ ցուցանիշներից մեկի՝ բաշի տվյալներում: Պարզվեց, որ 596 հետազոտվողներից միայն 434-ի դեպքում (72,8%) էր մարմնի զանգվածի ցուցիչը (ՄՉԶ) նորմայի սահմաններում: 51-ի դեպքում (8,6%) այն նորմայից ցածր էր, այսինքն՝ առկա էր բաշի պակասություն, իսկ 111-ի դեպքում (18,6%)՝ հավելյալ բաշ: Ընդ որում, այդ ցուցանիշները տղաների շրջանում ունեին հետևյալ տեսքը. 211-ի (69,6%) դեպքում արձանագրվեց միջին ՄՉԶ, 23-ի դեպքում (7,6%)՝ ցածր, 69-ի դեպքում (22,8%)՝ բարձր: Աղջիկների շրջանում ՄՉԶ-ն նորմայի սահմաններում էր 223-ի դեպքում (76,1%), 48-ի դեպքում (16,4%) առկա էր բաշի պակասություն, իսկ 42-ի դեպքում (14,3%)՝ հավելյալ բաշ (աղյուսակ 2):

Ներխմբային վերլուծությունից պարզվեց, որ հետազոտված տղաների բաշի ավելցուկն ավելի հաճախ դիտվում էր 11-15 տարեկանների շրջանում՝ տատանվելով 21,1-37,5%-ի սանմաններում, իսկ աղջիկներինը՝ 11-14 տարեկանների շրջանում՝ յուրաքանչյուր խմբում կազմելով հետազոտվածների 14,3-18%-ը: Ընդ որում, ճարպակալման տարածվածությունը երեխաների շրջանում կազմում էր 6%: Ճարպակալում դիտվում էր տղաների 7,9%-ի դեպքում (կազմելով հավելյալ բաշ ունեցողների 34,8%-ը), աղջիկների 4,1%-ի դեպքում (կազմելով հավելյալ բաշ ունեցողների 28,6%-ը): Տղաների շրջանում հավելյալ բաշն առավելագույն տարածված էր 11 տարեկանների շրջանում և կազմում էր 37,5%, իսկ բաշի պակասության տարածվածությունը մեծ էր 15 տա-

րեկանների շրջանում, մինչդեռ աղջիկների դեպքում բաշի պակասությունն ավելի շատ հանդիպում էր 12 տարեկանների շրջանում, ընդ որում, 15 տարեկան տղաների շրջանում բաշի պակասությունը 15,3% էր, 12 տարեկան աղջիկների շրջանում՝ 17,7%:

Եզրակացություն.

1. Ֆիզիկական զարգացման միջին տեմպեր ունեն 11-16 տարեկան երեխաների 57,4%-ը:
2. Միջինից ցածր և խիստ ցածր տեմպեր ունեն 17,6%-ը, իսկ միջինից բարձր և խիստ բարձր՝ երեխաների 25%-ը:
3. Հետազոտված երեխաների 18,6%-ի դեպքում արձանագրվել է հավելյալ բաշ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Լ.Ռ. Հիգիենա և բժշկական էկոլոգիա // Ուսումնական ձեռնարկ ԵՊԲՀ ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների բակալավրիատում սովորող ուսանողների համար – Երևան, 2012. - 96-98 էջ.
2. Аг-оол Е.М. Сравнительная характеристика особенностей физического развития подростков Тувы и других этнических групп // Гигиена и санитария. М., 2007, № 2, с. 47-50
3. Антропова М.В., Якушанцев О.И. // Проблемы и перспективы формирования здоровья детей и учащейся молодежи. Мурманск, 1997, с. 50-52
4. Гигуз Т.Л., Поляков А.Я., Богачанов Н.Д. Динамика физического развития учащихся школ города Новосибирска // Гигиена и санитария. М., 2003, № 3, с. 50-52
5. Грицинская В.Л. Современные тенденции роста и развития детей Красноярска // Гигиена и санитария. М., 2009, № 1, с. 47-49
6. Давыденко Л.А. Особенности физического развития школьников г. Волгограда // Материалы IX съезда Педиатров России. Детское здравоохранение России: стратегия развития. М., 2001, с. 173-174
7. Здоровье детей России (Состояние и проблемы). В кн.: под редакцией А.А.

Баранова. М., 1990, с. 31-39

8. Кучма В.Р., Сухарева Л.М. Состояние здоровья школьников и роль школ в охране здоровья детей (к 80-летию Всесоюзного общества детских врачей – Союза педиатров России) // Российский педиатрический журнал, 2008, № 3, с. 4-13
9. Солодовников Ю.Л. Самооценка физического развития студентами медицинского училища // Гигиена и санитария. М., 2010, № 1, с. 82-84
10. Щепин О.П. Здоровье населения Российской Федерации: проблемы и перспективы // "Вестник РАМН", М., 1996, № 6, с. 11-15
11. Desjarlais R., Einsenberg L., Good B., Kleinman A. World mental health. Problems and priorities in low-income countries. NY: Oxford University Press, 1995, P. 27-43
12. Physical status: the use and interpretation of anthropometry // Report of a WHO Expert Committee. Geneva, 1995, № 85, 542 p.
13. Mittelman M., Bayer J., Plunkett S. Total Navy recruit health: making our sailors fit for the fleet // Mil. Med., 1998, Vol. 163, № 2, P. 98-101
14. Van Egroo L.D. Attends des pediatrics et des familles: resultants de dues equates. Le Pediatre. 1997, Vol. 33, № 158, P. 215-221

РЕЗЮМЕ

ТЕМПЫ ФИЗИЧЕСКОГО РАЗВИТИЯ ДЕТЕЙ В ГОРОДЕ ЕРЕВАНЕ

Մկրտչյան Ս.Գ., Խաչիկյան Ն.Զ., Կոչարովա Ս.Գ., Գալստյան Լ.Կ.
ԵԳՄՍ, Կաֆեդրա հիգիենայի և էկոլոգիայի

Ключевые слова: подростки, колебания веса, темпы физического развития.

Были исследованы 596 подростков в поликлиниках “Мурацан” и “Герацци”. С помощью шкал регрессий были оценены темпы физического развития. Средние темпы физическо-

го развития были выявлены у 57,4% детей от 11 до 16 лет. Среди 17,6% подростков темпы физического развития были ниже среднего или низкими, а у 25% - выше среднего или высокими. Среди 18,6% подростков наблюдается избыточный вес.

SUMMARY

TEENAGERS' PHYSICAL DEVELOPMENT RATES IN YEREVAN

Մկրտչյան Ս.Գ., Խաչիկյան Ն.Զ., Կոչարովա Ս.Գ., Գալստյան Լ.Կ.
YSMU, Department of Hygiene and Ecology

Keywords: teenagers, weight fluctuations, physical development rates.

596 teenagers were examined in “Muratsan” and “Heratsi” policlinics. Their physical development rates were estimated with

the help of the regression scales. 57,4 % of children at the age of 11-16 had average rates of physical development. Among 17,6 % of teenagers physical development rates were below average and low, and among 25% - above average and high. 18,6 % of teenagers have overweight.

ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Սիրականյան Լ. Յ.

ԵՊԲՀ, հանրային առողջության և առողջապահության ամբիոն

Բանալի բառեր՝ բժշկական ծառայություն, գին, ծախսերի վերաբաշխում, հաշվառման մեթոդ:

Բժշկական հաստատությունների առջև ծագել է գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման խնդիրը: Բժշկական ծառայությունն ունի իր արժեքը, որն արտահայտվում է սահմանված գնով: Ծառայության գինը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ ինքնարժեքից և շահույթից, որոնցից յուրաքանչյուրի մեծությունը գտնելու համար անհրաժեշտ են հստակ տեղեկություններ ծախսերի վերաբերյալ [3]:

Բժշկական ծառայության արժեքը որոշելու համար ստորաբաժանումները բաժանվում են հիմնականի և օժանդակի, ընդ որում, այդ բաժանումը միանշանակ չէ: Հիմնական են ստացիոնար բաժանմունքը, պոլիկլինիկաների ախտորոշման բաժանմունքները, որտեղ հիվանդին անմիջապես մատուցվում են բժշկական օգնություն և սպասարկում: Այս դեպքում ծախսերն անմիջականորեն պայմանավորված են մատուցվող ծառայությամբ, և հիմնական ծախսեր են: Օժանդակ են ընդհանուր ինստիտուցիոնալ ծառայությունները, որոնք ապահովում են ստացիոնար և ախտորոշիչ բաժանմունքների գործունեությունը, որոնք անմիջապես իրականացնում են բժշկական ծառայություններ, այսպես՝ օժանդակ են ադմինիստրատիվ բաժանմունքը, կադրերի բաժինը, հաշվապահությունը, հիվանդանոցին պատկանող դեղատոմսեր, մանրէազերծման սենյակը և այլն: Այս դեպքում ծախսերը վերադիր են և անմիջականորեն չեն առնչվում ծառայությանը: Այսինքն՝ վերադիր ծախսերն անհրաժեշտ են բժշկական ծառայություններ մատուցելու համար, սակայն ամիջականորեն չեն առնչվում այդ գործընթացին: Անհրաժեշտ է նշել, որ ծախսերի վերագրումը այս կամ այն տեսակին պայմանական է, օրինակ՝ անկողնային պարագաների վաճառման ծախսերը բժշկական ծառայության տեսանկյունից վերադիր են, իսկ նույն ծախսերը վաճառատան համար, այլ բաժանմունքներին ծառայություն մատուցելու հետ կապված, հիմնական են [4]:

Հետևաբար վերաբաշխում իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել ծախսերի առաջացման և դրանց նպատակի առանձնահատկությունները: Այսպես՝ վիրահատական բաժանմունքի աշխատակիցների

հաստիքները հաճախ գետեղվում են վիրաբուժական բաժանմունքի ցանկում, մինչդեռ իրականում վիրահատական բաժանմունքում կատարվում են նաև այնպիսի վիրահատություններ, որոնք վերաբերում են այլ բաժանմունքներին՝ գինեկոլոգիական, վնասվածքաբանական և այլն: Հետևաբար, վիրահատական միջամտության ծախսերը հաշվարկելու համար չի կարելի վիրաբուժական բաժանմունքի բոլոր ծախսերը վերագրել վիրահատական բաժանմունքին [3]:

Որոշումներ կայացնելու, ինչպես նաև տրամադրվող տեղեկատվության որակը բարելավելու համար առաջ է գալիս ծախսերի վերաբաշխման անհրաժեշտության հարցը: Այն ժամանակ, երբ ծախսերը հիմնականում փոփոխվել են մատուցվող ծառայությունների քանակին համապատասխան (փոփոխուն ծախսեր), ստացված տեղեկատվությունը, թեպետ ճշգրտությամբ չի բնութագրվել, այնուամենայնիվ եղել է կիրառելի: Ներկայումս կազմակերպությունների ծախսերի կառուցվածքը էական փոփոխությունների է ենթարկվել: Ծախսերի մի մասը կայուն է մնացել մատուցվող ծառայությունների քանակի փոփոխությունների դեպքում, որը վկայում է կազմակերպություններում ծախսերի վերաբաշխման խնդիրների անհրաժեշտության և արդիականության մասին:

Առանձին հիմնական ստորաբաժանումների միջև օժանդակ ծախսերի վերաբաշխման խնդիրը կարելի է բաժանել երկու մասի՝

1. անուղղակի ծախսերի վերաբաշխում,
2. օժանդակ ստորաբաժանումների ծախսերի վերաբաշխումն ըստ հիմնական ստորաբաժանումների:

Առաջին դեպքում խոսքն անուղղակի ծախսերի վերաբաշխման մեթոդների մշակման մասին է, որոնք բնորոշ են վերադիր ծախսերին, հետևաբար վերադիր և անուղղակի ծախսերը այս ենթատեքստում դիտվում են որպես հոմանիշներ՝ չմոռանալով դրանց տարբերությունների մասին:

Երկրորդ դեպքում կատարվում է օժանդակ ստորաբաժանումների հիմնական ծախսերի փոխանցում հիմնական ստորաբաժանումների վերադիր ծախսերին:

Ծախսերի վերաբաշխման մեթոդաբանությունը, ըստ գիտական գրականության [5] տվյալների, կատար-

վում է երեք փուլերով՝

1. ուղղակի ծախսերի հաշվառում՝ ըստ բոլոր ծախսերի կենտրոնների,
2. ծախսերի վերաբաշխման սկզբունքների որոշում,
3. օժանդակ կենտրոնների ծախսերի բաշխում:

Բժշկական հաստատության ծախսերի բաշխումը սկսվում է դրանց տարանջատումով՝ ըստ ծախսերի կենտրոնի:

Այսպես, օրինակ՝ վիրաբուժական բաժանմունքի բժշկների աշխատավարձը, դեղորայքի, սննդի և այլ նյութածախսերը, որոնք անմիջականորեն առնչվում են վիրաբուժական բաժանմունքին, այդ բաժանմունքի ծախսերն են: Այսպիսի մոտեցման դեպքում բոլոր ծախսերը, որոնք ուղղակիորեն կրում է տվյալ ստորաբաժանումը, ուղղակի ծախսեր են, եթե անգամ դրանք անմիջականորեն չեն առնչվում հիվանդների սպասարկման գործընթացին:

Հաջորդ փուլում կատարվում է ծախսերի բաշխում՝ ըստ եկամտի կենտրոնների՝ ընտրելով բազային միավոր, որը հնարավորություն է տալիս ծախսերը վերաբաշխելու՝ ըստ յուրաքանչյուր եկամտի կենտրոնի: Հիմնական սկզբունքն այն է, որ օժանդակ ստորաբաժանման ծախսերի մեծ մասը պետք է վերագրել այն եկամտի կենտրոնին, որն առավել հաճախ է օգտվում տվյալ ստորաբաժանման ծառայություններից: Միայն վերաբաշխման արդյունքում հնարավոր են թյուր եզրակացություններ. այսպես՝ ստորաբաժանումների կողմից կատարված ծախսերի սխալ հաշվառումը կհանգեցնի գործունեության արդյունավետության ոչ օբյեկտիվ գնահատականների:

Դիցուք, եթե կոմունալ ծախսերը վերաբաշխելու համար որպես հիմք ընդունել ընդհանուր ֆինանսավորման մեջ տվյալ ստորաբաժանման զբաղեցրած տարածքի մասնաբաժինը, ապա ավելի մեծ ծախսեր ունեցող վերակենդանացման բաժանմունքին կարող է վերագրվել կոմունալ ծախսերի մեծ մասնաբաժին՝ դիտարկվող բաժանմունքի զբաղեցրած տարածքի այդքան էլ մեծ չլինելով հանդերձ: Ծախսերի նման վերաբաշխումը չի կարող արդյունավետ լինել տվյալ ստորաբաժանմանը մեխանիկորեն վերագրվող արհեստականորեն ուճացրած ծախսերի պատճառով, որոնք էապես կբարձրացնեն տվյալ ստորաբաժանման կողմից մատուցվող ծառայությունների արժեքը:

Կան օժանդակ ստորաբաժանումների ծախսերի վերաբաշխման այլընտրանքներ: Ծախսերի վերաբաշխման այլընտրանքային մեթոդներն առանձնանում են իրենց կիրառման հնարավորություններով կամ բարդություններով և բնականաբար ունեն մի շարք առավել

լուրջություններ ու թերություններ:

Սկզբունքային նշանակություն ունի վերաբաշխման չափանիշների որոշման հարցը՝ կարևորելով առաջադրված խնդրի ճիշտ սկզբունքի ընտրությունը:

Կան ծախսերի վերաբաշխման չորս մեթոդներ, որոնք են [4]՝

1. ընդհանուր վերադիր ծախսերի վերաբաշխում՝ հիմնական ստորաբաժանումների աշխատավարձի ֆոնդի վերադիր ծախսերի մասնաբաժինն համապատասխան կամ ընդհանուր ծախսերի մեջ վերադիր ծախսերին համապատասխան վերադիր ծախսերի գործակցի կիրառմամբ,
2. վերադիր ծախսերի վերաբաշխում՝ աշխատավարձի ֆոնդին համապատասխան,
3. առանձին վերադիր ծախսերի անկախ վերաբաշխում,
4. ծախսերի քայլ առ քայլ վերաբաշխում:

Դիտարկենք այս մեթոդները պարզեցված համակարգում: Մասնավորապես ենթադրենք, որ ունենք 2 հիմնական եկամտի կենտրոն՝ թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքներ և 3 օժանդակ բաժանմունքներ՝ տնտեսական ծառայություն, վարչական մաս, սննդի բաժին: Ենթադրենք նաև, որ դրանց առնչվող ուղղակի ծախսերը դիցուք մեկ ամիս ժամանակահատվածի դեպքում կազմում են համապատասխանաբար 500, 600 և 300, 200, 100 պայմանական միավոր (1000 դրամ): Ուշագրավ է այն հանգամանքը, որ բոլոր ծախսերը դիտարկվում են որպես ուղղակի: Օժանդակ ստորաբաժանումների ծախսերը դառնում են վերադիր, երբ դիտարկվում են հիմնական ստորաբաժանումների տեսանկյունից:

Այսպես՝ **1-ին մեթոդի** դեպքում վերադիր ծախսերը սովորաբար հաշվարկվում են հիմնական ստորաբաժանումների աշխատավարձի կամ ուղղակի ծախսերի տոկոսային հարաբերությամբ: Մեթոդի էությունը վերադիր ծախսերի գործակիցը որոշելն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$(1) Q=O \div E \times 100\%, \text{ որտեղ}$$

Q-ն վերադիր ծախսերի գործակիցն է,
O-ն՝ օժանդակ կենտրոնների ծախսերը, որոնք ընդունում են 600 արժեք,
E-ն՝ եկամտային կենտրոնների ծախսերը, որոնք ընդունում են 1100 արժեք:

Դիտարկվող օրինակի վերադիր ծախսերի գործակիցը 54,55% է: Վերադիր ծախսերի գործակիցը ստանալով՝ կարելի է հաշվել նաև կոնկրետ ծառայության վերադիր ծախսերը ստորև բերված բանաձևով՝

Աղյուսակ 1.

Վերաբաշխման արդյունքներն ըստ վերադիր ծախսերի գործակցի.

Բաժանմունք	Վերադիր ծախսերի գործակց	Ուղղակի ծախսեր	Վերադիր ծախսեր	Ընդամենը ծախսերը վերաբաշխումից հետո
թերապևտիկ	54,55	500	273	773
վիրաբուժական	54,55	600	327	927

Աղյուսակ 2.

Վերաբաշխման արդյունքներն ըստ աշխատավարձի ֆոնդի.

Ծախսերի կենտրոններ	Ուղղակի ծախսեր	Վերադիր ծախսերը ըստ բաժինների	Եկամտային կենտրոնների ծախսերի մեծություն
1. Հիմնական ստորաբաժանումներ			
թերապևտիկ բաժանմունք	500	300	800
վիրաբուժական բաժանմունք	600	300	900
ընդամենը	1100	600	
2. Օժանդակ ստորաբաժանումներ			
տնտեսական ծառայություն	300		
վարչական բաժանմունք	200		
սննդի բաժին	100		
ընդամենը	600		
ընդամենը ծախսեր	1700		1700

Աղյուսակ 3.

Օժանդակ ստորաբաժանումների ծախսերի բաշխումը ըստ ընտրված բազաների.

Ծախսերի կենտրոն (բաժանմունքներ)	Վերաբաշխման բազայի ցուցանիշի մեծությունը/դրամ			Ընդամենը վերաբաշխված ծախսեր/դրամ
	Տնտեսական ծառայություն	Վարչակազմ	Սննդի բաժին	
թերապևտիկ	150	80	45	275
վիրաբուժական	150	120	55	325
ընդամենը	300	200	100	600

(2) $VԾ = ՈԻԾ \times Գ$, որտեղ

VԾ-ն վերադիր ծախսերն են,
ՈԻԾ-ն՝ ուղղակի ծախսերը, որոնք թերապևտիկ բաժանմունքի դեպքում ընդունում են 500, իսկ վիրաբուժականի դեպքում՝ 600 արժեքները: Վերաբաշխման արդյունքները ներկայացված են ստորև (աղ. 1):

Համանման ձևով կարելի է որոշել յուրաքանչյուր հիմնական ստորաբաժանմանն առնչվող վերադիր ծախսերը: **Ուշագրավ է այն փաստը, որ վերադիր ծախսերի գործակցիցը և առավել մեծ ուղղակի ծախսեր ունեցող ստորաբաժանմանը բաժին ընկնող վերադիր ծախսերի մեծությունը ուղիղ համեմատական են:**

Ծախսերի վերաբաշխման **երկրորդ մեթոդի** դեպքում հաշվի է առնվում վերադիր ծախսերի հարաբերությունը հիմնական ստորաբաժանումների աշխատավարձերի ֆոնդին: Հիմնական ստորաբաժանումների աշխատավարձերի պայմանական 300 միավորի դեպքում իրականացվում է ծախսերի վերաբաշխում (աղ. 2):

Ծախսերի վերաբաշխման **երրորդ մեթոդի** հիմքում յուրաքանչյուր տեսակի օժանդակ ստորաբաժանմանը վերադիր ծախսի անկախ վերաբաշխումն է՝ ըստ եկամտային կենտրոնների: Ընդ որում, յուրաքանչյուր ծախսի վերաբաշխման համար կարող է օգտագործվել առանձին չափորոշիչ:

Մեթոդը հնարավորություն է տալիս հստակություն ապահովելու, սակայն առավել բարդ և աշխատատար է. օժանդակ ստորաբաժանումների ծախսերի բաշխումն իրականացվում է միայն հիմնական ստորաբաժանումների վրա, այսինքն՝ հաշվի չի առնվում այն օժանդակ ստորաբաժանման աշխատանքը, որը կատարվել է մեկ այլ օժանդակ ստորաբաժանման համար:

Եթե որպես օժանդակ ստորաբաժանումների ծախսերի վերաբաշխման բազա ընտրենք տնտեսական ծառայության զբաղեցրած տարածքը, վարչական բաժանմունքի դեպքում՝ աշխատակազմի թվաքանակը, իսկ սննդի բաժնի դեպքում՝ մասնաբաժինների թիվը, ապա այդ ստորաբաժանումների ծախսերի վերաբա-

Աղյուսակ 4.

Վերաբաշխման արդյունքներն ըստ առանձին վերադիր ծախսերի.

Ծախսերի կենտրոններ	Ուղղակի ծախսեր	Վերաբաշխված ծախսեր	Ընդամենը
1. Հիմնական ստորաբաժանումներ/բաժանմունքներ			
թերապևտիկ	500	275	775
վիրաբուժական	600	325	925
2. Օժանդակ ստորաբաժանումներ			
տնտեսական ծառայություն	300	-	-
վարչական մաս	200	-	-
սննդի բաժին	100	-	-
ընդամենը	1700	600	1700

Աղյուսակ 5.

Օժանդակ ստորաբաժանումների վերաբաշխման բազաները.


Ծախսերի կենտրոն	Ուղղակի ծախսեր	Վերաբաշխման հիմքեր		
		Տնտ.ծառ.(զբաղեցրած տարածք)	Վարչական բաժանմունքի աշխատակազմի թվաքանակ	Սննդի բաժնի մասնաբաժիններ
1. Հիմնական ստորաբաժանումներ/բաժանմունք				
թերապևտիկ	500	600	32	450
վիրաբուժական	600	600	48	550
2. Օժանդակ ստորաբաժանումներ				
տնտեսական ծառայություն	300	-	-	-
վարչական բաժանմունք	200	600	-	-
սննդի բաժին	100	200	20	-
ընդամենը	1700	2000	100	1000

շխումը, ըստ ընտրված բազաների, կունենա հետևյալ պատկերը (աղ. 3).

Այնուհետև իրականացվում է ծախսերի վերաբաշխում (աղ. 4):

Ծախսերի վերաբաշխման **չորրորդ՝ քայլ առա քայլ մեթոդի** էությունն այն է, որ ծախսերի վերաբաշխումն իրականացվում է փուլ առ փուլ՝ հերթականությամբ: Սկզբում բաշխվում են մեկ ստորաբաժանման ծախսերը մյուսների վրա, հետո երկրորդինը և այսպես մինչև վերջին ստորաբաժանման ծախսերը: Մեթոդի կարևոր առանձնահատկությունն այն է, որ բոլոր օժանդակ ստորաբաժանումների ծախսերը վերաբաշխվում են նաև օժանդակ ստորաբաժանումների միջև, որը նախորդ երկու մեթոդների դեպքում չի նախատեսվում:

Հարկ է նշել, որ սկզբունքային նշանակություն ունի հերթականության ճիշտ ընտրությունը: Սովորաբար բաշխումը սկսվում է այն ստորաբաժանումից, որն ունի սպասարկման առավել մեծ շրջանակ:



Նկ. 1. Ծախսերի վերաբաշխման քայլ առ քայլ մեթոդի սխեմատիկ պատկերն ըստ վերաբաշխման հերթականության՝ №1, №2, №3:

Այնուհետև անհրաժեշտ է ընտրել վերաբաշխման բազա: Ստորև ներկայացված աղյուսակից երևում է (աղ. 5), որ վարչական ստորաբաժանումն օգտագործում է ընկնում ընդհանուր տարածքի 30%-ը, ապա

Աղյուսակ 6.*Վերաբաշխման արդյունքներն ըստ քայլ առ քայլ մեթոդի*

Ծախսային կենտրոն	Ուղղակի ծախսեր	Տնտ. ծառ	Վարչ.	Սննդի բաժին	Ընդամենը ծախսեր
1. Հիմնական ստորաբաժանումներ/բաժանմունք					
թերապևտիկ	500	90	93	85	768
վիրաբուժական	600	90	139	103	932
2. օժանդակ ստորաբաժանումներ					
տնտեսական ծառայություն	300	(300)	-	-	-
վարչական բաժանմունք	200	90	(290)	-	-
սննդի բաժին	100	30	58	(188)	-
ընդամենը ծախսեր	1700	-	-	-	1700

Աղյուսակ 7.*Ծախսերի վերաբաշխման համատեղ արդյունքներն ըստ 4 մեթոդների*

Եկամտային կենտրոններ, բաժանմունք	Մեթոդ 1	Մեթոդ 2	Մեթոդ 3	Մեթոդ 4
	Վերադիր ծախսերի գործակցով վերաբաշխում	Աշխատավարձի ֆոնդին համապատասխան վերաբաշխում	Առանձին վերադիր ծախսերի անկախ վերաբաշխում	Ծախսերի վերաբաշխման քայլ առ քայլ մեթոդ
թերապևտիկ	773	800	775	768
վիրաբուժական	927	900	925	932
ընդամենը	1700	1700	1700	1700

տնտեսական ծախսերի 30%-ը բաշխվում է վարչական ստորաբաժանմունքի վրա, իսկ տնտեսական ծախսերը չեն բաշխվում տնտեսական ծառայության վրա, որի պատճառով համապատասխան վանդակը դատարկ է:

Հաջորդ փուլում վարչական ծախսերը բաշխվում են սննդի, թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքների վրա: Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, վարչական ծախսերը չեն բաշխվում վարչական և տնտեսական ստորաբաժանումների վրա, քանի որ դրանք արդեն բաշխված են եղել: Վերջին փուլում բաշխվում են սննդի բաժնի ծախսերը (աղ. 6) [1]:

Այսպիսով, վերոնշյալ ծախսերի վերաբաշխման մեթոդների համեմատական վերլուծության արդյունքները վկայում են (աղ. 7), որ յուրաքանչյուր մեթոդի դեպքում ծախսերի վերաբաշխումն ըստ բաժանմունքների և դրանց հարաբերակցությունները տարբեր են, հետևաբար տարբեր կլինեն նաև այդ բաժանմունքների ծախսերի մեծությունները, գործունեության արդյունավետության գնահատականները, գների մակարդակները, ծառայությունների ինքնարժեքները և այլն:

Առաջին հայացքից թվում է, թե բոլոր մեթոդներն էլ կոնկրետ իրավիճակի դեպքում հստակություն են պարունակում, սակայն երբ ընդլայնվում է կիրառման

ոլորտը, ծագում են խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել:

Մասնավորապես երկրորդ մեթոդի դեպքում կարևոր բացթողում է օժանդակ ստորաբաժանումների միջև ծախսերի վերաբաշխումը, քանի որ բուժաստատության առջև դրված խնդիրը միայն հիմնական ստորաբաժանումների միջև դրանց վերաբաշխումը չէ:

Հետևաբար բոլոր ծախսերի վերաբաշխման գործընթացում այս մեթոդները կորցնում են արդիականությունը:

Մյուս մեթոդով՝ աշխատավարձի ֆոնդին համապատասխան վերաբաշխման դեպքում վերոնշյալ թերությունից բացի, առաջանում է հստակության խնդիր, քանի որ բոլոր ծախսերը միայն աշխատավարձում չեն պարփակվում: Մյուս կողմից չափանիշների ճիշտ ընտրությամբ պայմանավորված վերաբաշխման բարդություն է առաջանում, որի պատճառով այդ մեթոդը ևս կարելի է համարել սահմանափակ կիրառելի:

Ի դեպ, հստակության խնդիրները լուծվում են վերադիր ծախսերի անկախ վերաբաշխման ժամանակ, սակայն թերի է մնում օժանդակ ստորաբաժանումների միջև ծախսերի վերաբաշխումը, որը սահմանափակվում է տվյալ մեթոդովի կիրառումը:

Օժանդակ ստորաբաժանումների միջև ծախսերի վերաբաշխման համեմատաբար կիրառելի՝ հստակության և կիրառման պարզության տեսանկյունից հաջողված տարբերակ է փուլ առ փուլ վերաբաշխումը փուլերի հերթականության ճիշտ ընտրության դեպքում:

Բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար հասկանալի պատճառներով ավելի շահավետ է ծախսերի այնպիսի վերաբաշխում, համաձայն որի՝ եկամտի մեծությունը նվազագույնն է: Խոսքը, ըստ էության, օրենսդրական կարգավորումների մասին է, որը հնարավոր է բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ֆինանսավորման

աղբյուրները համապատասխանաբար ընտրելու ծախսերի վերաբաշխման մեթոդի դեպքում: Դրա կարևորությունը խնդիրը ծախսերի իրական մակարդակի իմացության շնորհիվ որոշումներ կայացնելու կարողությունն է [2], և բոլոր դեպքերում վերաբաշխման տարբերակի ընտրությունը մեծապես պայմանավորված է կազմակերպությունում գործող հաշվառման մեթոդով:

Վերոնշյալը ևս մեկ անգամ փաստում է ծախսերի վերաբաշխման համակարգի ճիշտ ընտրության կարևորության մասին, քանի որ բժշկական կազմակերպությունների ծախսերի կառավարման ռացիոնալ համակարգը գործունեության արդյունավետության բարձրացման երաշխիք է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Артюхов И.П., Морозова Т.Д., Денисова Н.И., Юрьева Е.А. Экономика Здравоохранения. – Красноярск, 2006, 239 с.
2. Грищенко О.В. Основы организации распределения косвенных затрат // Управленческий учет конспект лекций. Таганрог, 2007, с. 25-28
3. Кадыров Ф.Н. Основы экономики здравоохранения // Менеджер здравоохранения, Москва, 2008, с. 17-27

4. Кадыров Ф.Н. Экономические методы оценки эффективности деятельности медицинских учреждений. Москва, 2007, 469 с.
5. Попов В.М., Ляпунов С.И. Анализ финансовых решений в бизнесе. Учебное пособие. Москва, 2007, 240 с.

РЕЗЮМЕ

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ РАСПРЕДЕЛЕНИЯ ЗАТРАТ В УПРАВЛЕНИИ МЕДИЦИНСКИМИ УЧРЕЖДЕНИЯМИ

Сиракян Л.А.

ЕГМУ, Кафедра социального здоровья и здравоохранения

Ключевые слова: медицинская услуга, цена, распределение затрат, метод учета.

Вопрос оценки эффективности деятельности различных типов медицинских учреждений крайне актуален. Медицинская услуга имеет свою стоимость, которая отражается в цене, в связи с чем правильное распределение и оценка затрат становятся особенно важными. Для медицинских учреждений более выгодно распределение затрат при мини-

мальном количестве дохода, что возможно при выборе более эффективного метода распределения и, по большому счету, зависит от действующего метода учета.

Существенное значение имеет правильный выбор системы распределения, поскольку рациональная система управления медицинским учреждением является гарантией повышения эффективности деятельности.

SUMMARY

THE ROLE OF COST REDISTRIBUTION IN THE HEALTHCARE ORGANIZATIONS MANAGEMENT

Sirakanyan L.H.

YSMU, Department of Public Health and Healthcare

Keywords: medical service, price, cost distribution, accounting method.

It is actually important to evaluate the effectiveness of various fields of healthcare organizations. Medical service has its costs, reflected in the price, and due to this, the correct redistribution and assessment of costs is especially important. The distribution with minimum amount of income is more profitable for healthcare

organizations. It is possible in case of choosing the right method of costs redistribution and mostly depends on the method of accounting.

It is essential to determine the appropriate method for redistributing costs, as the rational management system for the healthcare organizations is the guarantee for increasing the efficiency of its activity.

ՅՏԴ. 614.2:616-053.6 (479.2

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐՂՆԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲԺՇԿԱ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Սիրականյան Լ. Հ.

ԵՊԲՀ հանրային առողջության և առողջապահության ամբիոն

Բանալի բառեր՝ ծախսերի կառավարման համակարգ, առողջապահական կազմակերպություն, գործունեության արդյունավետության գնահատականներ:

Ազգի առողջությունը պետության սոցիալական բարեկեցության, կայուն տնտեսական գործունեության և մարդկային կապիտալի որակի բարձրացման կարևոր նախադրյալ է: Ուստի բնակչությանը հասանելի և որակյալ բժշկական օգնություն ապահովելը լուրջ խնդիր է ցանկացած պետության համար՝ անկախ տնտեսավարման մոդելից և ֆինանսական համակարգից:

Մեր ժամանակներում առողջապահության բազմադրյուր ֆինանսավորման համակարգի հետ մեկտեղ առկա ռեսուրսների ծավալը և կառուցվածքը, դրանք ուղղորդելու և օգտագործելու մեխանիզմը չի համապատասխանում առողջապահության և բժշկական ծառայությունների մատուցման պահանջներին: Մյուս կողմից առողջապահական կազմակերպությունների (ԱԿ) կենտրոնացված կազմակերպական կառուցվածքի ոչ բավարար ճկունությունը հնարավորություն չի ընձեռում արագ և ժամանակին կայացնելու կառավարչական որոշումներ, իսկ հաշվապահական հաշվառումը ի վիճակի չէ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու գործունեության որոշակի տեսակների կամ ծառայության իրական ինքնարժեքի և եկամտաբերության մասին [6, 2]:

ԱԿ-ի բոլոր բիզնես-գործընթացները նկարագրող հավաստի և օպերատիվ տեղեկատվության ստացումը հնարավորություն է տալիս որոշելու մատուցվող ծառայությունների մրցունակ գինը, իրականացնելու գործունեության տարբեր ոլորտների ծախսածածկման վերլուծությունը, օպտիմալացնելու ծառայությունների ինքնարժեքը և հետևաբար ծախսերի կառավարման համակարգի ձևավորման և զարգացման միջոցով բարձրացնելու կազմակերպությունների գործունեության բժշկա-սոցիալական արդյունավետությունը [8, 3]:

Ժամանակակից պայմաններում տնտեսական ռեսուրսների սահմանափակ լինելը, հնարավոր նվազագույն ծախսերով օպտիմալության և առավելագույն արդյունքի հասնելու ձգտումը վկայում են ԱԿ-ի ծախսերի կառավարման համակարգ ներդնելու արդիականության և անհրաժեշտության մասին [5, 7]:

Կարևորելով ծախսերի կառավարման համակարգի նշանակությունը, նրա տեղն ու դերը առողջապահական կազմակերպության արդյունավետությունը բարձրացնելու գործընթացում՝ մեր կողմից իրականացվել է աշխատանք, որի նպատակը ծախսերի կառավարման համակարգի ներդրմամբ առողջապահական կազմակերպությունների բժշկա-սոցիալական և տնտեսական արդյունավետությունների բարձրացումն է: Ուսումնասիրվել և գնահատվել են հաճախումների, մատուցված բժշկական ծառայությունների, մահաբերության վերաբերյալ պաշտոնական տվյալները մինչ ծախսերի կառավարման համակարգ ներդնելը և դրանից հետո, քանի որ դրանք, պայմանավորված լինելով կառավարման համակարգի արդյունավետությամբ, ինքնին լուրջ տվյալներ են կազմակերպության ընդհանուր գործունեության բժշկա-սոցիալական արդյունավետության վերաբերյալ:


Վերլուծության արդյունքները ստացվել են կոնկրետ առողջապահական կազմակերպության օրինակով. դրանք վկայում են (նկ. 1) դիտարկման 2009-2011 թվականներին հիվանդների հաճախումների, ստացած բժշկական ծառայությունների և մահաբերության վերաբերյալ հաշվարկված ցուցանիշների անբարենպաստ փոփոխությունների մասին, մինչդեռ ծախսերի կառավարման համակարգ ներդնելու արդյունքում՝ 2012-ից սկսած, կազմակերպության բժշկա-սոցիալական արդյունավետությունը բնութագրող մի շարք ցուցանիշների դինամիկայում էական դրական միտումներ են գրանցվել [1, 4]:

Այսպես՝ ըստ տարեկան հաշվետվության տվյալների՝ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայություններ ստանալու համար 2009-ին կազմակերպություն դիմել է 23 662 անձ, 2010-ին՝ 21 122, 2011-ին՝ 20 593, որը վկայում է, որ հաճախումների քանակը տարեցտարի նվազել է և 2011-ին դրսևորվել ամենացածր մակարդակում: Սակայն 2011-ին՝ ծախսերի կառավարման համակարգ ներդնելուց հետո՝ 2012-ին հաճախումների քանակը կազմել է 21 982, 2013-ին՝ 24 497, իսկ 2014-ին՝ 26 127:

Այսպիսով, ներկայացված տվյալները վկայում են, որ հիվանդների հաճախումների քանակը 2012-ից ի վեր հետագա բոլոր տարիներին 2011-ի նկատմամբ

բարձր է եղել:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ակնհայտ փոփոխություններ են դիտարկվել պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ ամփոփ տվյալներում (նկ 1):



Նկ. 1. Ամփոփ տվյալներ պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ:

Այսպես՝ ընդամենը հաշվարկվել են պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ ինտենսիվ ցուցանիշներ (P, %_{ԳԾ}):

Վերլուծության արդյունքները վկայում են (նկ.1), որ դիտարկման 2009-2011 թվականներին ուսումնասիրվող ցուցանիշը ենթարկվել է խիստ անբարենպաստ փոփոխությունների (2009-ին կազմել է 4408,33, 2010-ին՝ 4579,11, իսկ 2011-ին՝ 1764,68)՝ դրսևորելով արժեքների զգալի տատանումներ (t / Նախորդ տարվա նկատմամբ = -16,50, t / 2009թ.-ի նկատմամբ = -16,32)՝ յուրաքանչյուր Նախորդ տարվա նկատմամբ գրանցվելով կայուն նվազման տեմպերով և վիճակագրորեն հավաստի ցածր արժեքներով:

Մինչդեռ ծախսերի կառավարման համակարգ ներդնելու արդյունքում 2012-ից ի վեր ցուցանիշի մակարդակի փոփոխություններն ակնհայտորեն տարբերվում են մինչ ներդրումը ցուցանիշի դրսևորած շարժից:

Այսպես՝ ուսումնասիրվող ցուցանիշը 2012-ից սկսած դրսևորվել է վիճակագրորեն հավաստի առավել բարձր արժեքներով. 2012-ին այն կազմել է 5224,27, 2013-ին՝ 5342,70, 2014-ին՝ 5357,68: Դիտարկվող ցուցանիշի վիճակագրորեն հավաստի դրական փոփոխությունների մասին են փաստում Ստյուդենտի գործակցի արժեքները (19,67, 20,99, 21,54):


Այսպիսով, հետազոտության արդյունքները վկայում են, որ պետական պատվերի շրջանակներում և վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայու-

թյունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ընդհանուր ցուցանիշը 2012-ից ի վեր հետագա բոլոր տարիներին, 2011-ի մակարդակի նկատմամբ լինելով ավելի բարձր, 2012-2014-ին գերազանցել է 2,96-3,04 անգամ:

Բժշկական հիմնարկի գործունեության արդյունավետության գնահատման տեսանկյունից նպատակահար ենք գտել տարանջատել պետական պատվերի շրջանակներում և վճարովի մատուցված ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը, քանի որ մինչև 2015-ը բժշկական հիմնարկներ ուղեգրումները կատարվել են խիստ հասցեագրված, իսկ պետական պատվերի տեղակայման կարգը և չափը որոշում է ՀՀ առողջապահության նախարարությունը, մինչդեռ վճարովի ծառայությունների հարցում որոշողը հիվանդն է: Այսպես՝ եթե անձը ինքն է վճարում, փորձում է փնտրել բժշկական հիմնարկ, որտեղ կարող է ստանալ խիստ որակյալ բժշկական օգնություն և սպասարկում, հետևաբար վճարովի ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ցուցանիշներն ուղղակիորեն փաստում են մատուցված ծառայությունների որակի մասին:

Համաձայն վերլուծության արդյունքների (նկ. 2)՝ 2009-2011-ին վճարովի բժշկական ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ցուցանիշը, դրսևորելով խիստ անկման միտումներ 2009-ի (1196,86) համեմատությամբ, 2011-ին (554,07) 2,2 անգամ ցածր է եղել:


Հարկ ենք համարում ընդգծել, որ ծախսերի կառավարման համակարգ ներդնելու արդյունքում փոփոխություններն էական են. վճարովի ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ցուցանիշի միտումները խիստ դրական են և վիճակագրորեն հավաստի:



Նկ. 2. Ամփոփ տվյալներ վճարովի բժշկական ծառայությունների վերաբերյալ:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ վճարովի սկզբունքով մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ հաշվարկված ինտենսիվ ցուցա-

Նիշը 2012-ից ի վեր հետագա բոլոր տարիներին, 2011-ի մակարդակի նկատմամբ լինելով ավելի բարձր, 2012-2014-ին գերազանցել է 2,88-3,07 անգամ:



Նկ. 3. Մահաբերության ընդհանուր ցուցանիշի շարժը 2009-2014թթ.:

Բժշկական հիմնարկի գործունեության արդյունավետության գնահատման լուրջ ցուցիչ է նաև մահաբերության ընդհանուր ցուցանիշը, հաճախումների համեմատությամբ ընդհանուր մահերի հաճախականությունը (Նկ. 3):

Հարկ ենք համարում ընդգծել, որ առողջապահական կազմակերպությունը, որտեղ ներդրվել է ծախսերի կառավարման համակարգը, առաջին կարգի հիվանդանոց է, որը նշանակում է, թե հիվանդներն այստեղ են տեղափոխվում նաև մարզերից, և մահվան պատճառները

ուսումնասիրելիս բացահայտվել է, որ գրանցված մահերի մոտ 30%-ը ծայրահեղ ծանր վիճակում մարզային հիվանդանոցներից տեղափոխված դեպքեր են: Այդուհանդերձ, ծախսերի կառավարման համակարգ ներդնելուց հետո դրական փոփոխություններ նկատելի են նաև մահաբերության ընդհանուր ցուցանիշի դինամիկայում: Այսպես՝ վերջինիս արժեքը, առաջին երկու տարիներին ոչ հավաստի տատանումներով բարձրանալով, 2011-ին հայտնվել է 294,27 մակարդակում (t/2009թ.=2,06): 2012-ից սկսած՝ ցուցանիշի արժեքը նվազել է՝ կազմելով 255,21 (t/2011թ.=−0,77), ապա 204,11 (t/2011թ.=−0,77), իսկ 2014-ին հայտնվել է 183,34 մակարդակում, որը հավաստիորեն t/2011թ.=−2,41 ցածր է 2011-ի համեմատությամբ:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ մահաբերության ընդհանուր ցուցանիշը 2012-ից ի վեր հետագա բոլոր տարիներին 2011-ի մակարդակի նկատմամբ ցածր է եղել 0,87-0,62 անգամ:

Այսպիսով, վերոնշյալ վիճակագրական վերլուծության տվյալները և դրանց գնահատման արդյունքները վկայում են, որ ծախսերի կառավարման համակարգ ներդնելուց հետո դրական որակական լուրջ փոփոխություններ են գրանցվել առողջապահական կազմակերպության գործունեության արդյունավետության մասին փաստող բժշկա-սոցիալական ցուցանիշների դինամիկայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гланц С. Медико биологическая статистика. – Москва, 1999. – 459с.
2. Кадыров Ф.Н. Проблемы участия частных медицинских организаций в обеспечении населения бесплатной медицинской помощью // Менеджер здравоохранения. 2004. – 2. – С. 11-14.
3. Andrew Wileman. Driving Down Cost: How to Manage and Cut Costs Intelligently. – Nicholas Brealey Publishing 2010. – 256p.
4. Beth Dawson, Robert G. Trapp. Basic and clinical biostatistics. Lang medical books. – McGraw-Hill, 2001. – 400 p.
5. Charles T. Horngren, George Foster, Srikant M. Datar, Madhav Rajan, Chris M. Ittner. Cost Accounting: A Managerial Emphasis. – Prentice Hall 2008. – 896p.
6. Colin Drury. Management and Cost Accounting. – Cengage Learning Emea 2012. – 775p.
7. Economics of health care financing: the visible hand/Cam Donaldson and Karen Gerard; with Stephen Jan, Craig Mitton and Virginia Wiseman, Basingstoke, Hampshire England.; New York: Palgrave Macmillan, 2005. –286 p.
8. Young D.W. Management accounting in healthcare organizations. – Jossey-Bass 2008. – 680p.

РЕЗЮМЕ

ТЕНДЕНЦИИ МЕДИКО-СОЦИАЛЬНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ В РЕЗУЛЬТАТЕ ВНЕДРЕНИЯ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ЗАТРАТАМИ

Сиракян Л.Г.

ЕГМУ, Кафедра общественного здоровья и здравоохранения

Ключевые слова: система управления затратами, медицинские учреждения, оценки эффективности деятельности.

Подчеркивая важность системы управления затратами и ее роль в процессе повышения эффективности медицинских организаций, были рассмотрены и оценены официальные

данные о посещаемости, медицинских услугах, смертности до и после внедрения системы управления затратами. Сравнительный анализ данных достоверно доказывает очень положительное влияние системы управления затратами на увеличение эффективности деятельности медицинского учреждения.

SUMMARY

TRENDS OF MEDICAL AND SOCIAL INDICATORS AS A RESULT OF COST MANAGEMENT SYSTEM CONTRIBUTION

Sirakanyan L.H.

YSMU, Department of Public Health and Healthcare

Keywords: cost management system, medical organizations, assessments of the activity efficiency.

Highlighting the importance of the cost management system and its role in the process of increasing the efficiency of medical organizations, the official data of attendance, medical services

and mortality were reviewed and evaluated by us before and after the contribution of the management system. The comparative analysis data significantly prove the role of the cost management system having strictly positive impact on increasing the efficiency of the medical organization activity.

ՈՒԹՅՎ/SWOT-Ը՝ ՈՐՊԵՍ ԱՄԲԻՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ԳՈՐԾԻՔ (ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԱՄԲԻՈՆԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ)

Նավասարդյան Գ.Ա. , Ավետիսյան Ս.Ա.
ԵՊԲՀ, ուսումնամեթոդական խորհուրդ

Բանալի բառեր՝ ՈւթՎ/SWOT, տարեկան հաշվետվություն, կրթության որակի ապահովում:

Բոլոնիայի գործընթացի շրջանակներում եվրոպական կրթական տարածքին հարիր մասնագիտական կրթության ընդունելի որակի ապահովման ուղղությամբ մեր բուհում պլանավորված և նպատակասլաց քաղաքականություն է իրականացվում գործընթաց-բոլոնիայի մայով [1,2]:

Միջազգային չափանիշներով ձևավորվող բժշկական բարձրագույն կրթության որակի համակարգում անհրաժեշտ է մոտեցումների հասցեական փոփոխություն, որի արդյունքում որակի վերահսկողությունից անցում կկատարվի դեպի որակի ապահովում:

Ակնհայտ է, որ որակյալ կրթության գրավականը ՄՈՒՀ-ի (մասնագիտական ուսումնական հաստատություն) արդյունավետ գործող որակի ապահովման ներքին համակարգն է, որի համար պատասխանատվություն են կրում գործող բոլոր օղակները:

Այս առումով կարևոր դեր ունեն հաստատության ամբիոնները, քանի որ, ի վերջո, հենց այս օղակներում են իրագործվում դասավանդումն ու ուսումնառությունը, ապագա մասնագետի պատրաստումը:

Վերոբերյալ համատեքստում արդիական և պահանջված են դառնում հետևյալ հարցադրումները.

- ❖ Արդյոք ՄՈՒՀ-ն ունի որոշակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր, որոնք գործում են հաստատության բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում:
- ❖ Արդյոք ՄՈՒՀ-ը մշտադիտարկում է սովորողների տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը:
- ❖ Արդյոք ձեռնարկվում են համապատասխան գործողություններ, որոնք կշտկեն որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումները:
- ❖ Ինչպե՞ս են իրագործվում որակի ապահովման վերջնարդյունքային մոտեցումը, ուսումնական գործընթացի ուղղահայաց և հորիզոնական ինտեգրացիան:

Սույն հոդվածում կփորձենք վերոնշյալ հիմնահարցերը դիտարկել ամբիոնի՝ որպես բուհի միավոր կառույ-

ցի գործունեության կտրվածքով:

Ամբիոնում ուսումնական գործընթացը կազմակերպելու, իրականացնելու ուղղությամբ տարվող աշխատանքի արտացոլման եղանակներից մեկը տարեկան հաշվետվությունն է: Մեր կարծիքով ամբիոնական հաշվետվությունները ներկա պահանջների համատեքստում կարիք ունեն գործնական փոփոխությունների: Ինչ նկատի ունենք: Մեզանում ներկայացվող տարեկան հաշվետվությունը մեծ մասամբ սովորաբար նկարագրական է: Նրանում ամբիոնի գործունեության բազմակողմանի խորքային վերլուծություն գրեթե չի կատարվում, պատշաճ ուշադրություն չի դարձվում կառուցողական դասավանդմանը կամ ուսումնառության շղթային:

Մեր տեսլականը այս հարցում

1. Հարկ է կատարել տարեկան հաշվետվության բովանդակային փոփոխություն՝ ինքնավերլուծության ձևաչափով, որի գլխավոր դետերմինանտը տվյալների հավաքագրումն է:
2. Վերլուծության արդյունավետ մեթոդաբանության ընտրություն (ինչ մեթոդներ պետք է կիրառվեն տվյալների վերլուծության համար):

Հարցադրումների նշյալ հենքից ելնելով՝ առաջարկում ենք հետևյալ ուղենիշները.

ա) Ամբիոնի հաշվետվության բովանդակությունն արտացոլող հավաքագրվող տվյալները խարսխվում են մասնագիտական կրթության համակարգի հայտնի վեց հարթությունների վրա (աղ. 1).

Աղյուսակ 1-ում տրված հարթությունների մակարդակով ամբիոնի աշխատանքի կազմակերպումը և շարունակաբար բարելավումը նպատակահարմար է իրագործել Դեմինգի շրջափուլի գործարկման միջոցով.

պլանավորում → իրականացում → ստուգում → բարելավում

Այսպիսով՝ ամբիոնի տարեկան հաշվետվություն-վերլուծությունը դիտարկվում է որպես գիտակցված և պլանավորված քարտեզագրված գործընթաց, որի իրականացումը ենթադրում է որակական և քանակական

Աղյուսակ 1

Հարթություն	Բնութագրիչներ
Միջավայր	Համապատասխան ռեսուրսներ (գույք, ժամանակակից սարքավորումներ, լաբորատորիաներ, հանրակացարաններ, դահլիճներ և այլն), ռեսուրսների հասանելիություն, գրավիչ միջավայր, օժանդակող ծառայություններ:
Ներուժ	Համապատասխան արոճետորդաստիճական կազմ, գիտելիքների տեսական բազա, կիրառական գիտելիքի բազա, որակավորումներ, դասավանդման և ուսումնառության համապատասխան բազա:
Մոտեցում	Ուսանողների կարիքների գնահատում և վերհանում, օժանդակություն ցուցաբերելու պատրաստակամություն, ուղղորդելու և խորհրդատվության մատչելիություն, խնդիրների լուծմանը հատուկ ուշադրություն, հարգանքին և փոխըմբռնմանը նպաստող միջավայր:
Բովանդակություն	Մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանությունը շուկայի պահանջներին, արդյունավետության, հիմնարար գիտելիքների և կարողությունների ապահովում, բազմակողմանի մոտեցում դասավանդմանը, որը ներառում է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, արդյունավետ հաղորդակցման և թիմային աշխատանքների կարողությունների ձևավորում, գիտելիքի ճկունություն և այն փոխակերպելու կարողություն:
Մատուցում	Մասնագիտության կրթական ծրագրերի և ծառայությունների մատուցման արդյունավետություն, հաջորդականություն և համապատասխանություն, ուսանողներին գնահատելու արդարացի և հետևողական մոտեցում, ուսանողների հետադարձ կապի ապահովում, նպաստում ուսանողների ուսումնառությանը:
Վստահելիություն	Արժանահավատություն, հետամուտ լինել նախանշված նպատակների ձեռքբերմանը, խնդիրների լուծում և բողոքների կարգավորում, ակադեմիական ազնվություն:

եղանակների կիրառում:

- Դրանցից առավել կիրառելի են՝
- ◆ գրաֆիկները (օր.՝ առաջադիմության մասին),
- ◆ Պարետոյի վերլուծությունը (վերհանում է խնդրի հիմնապատճառները, ախտորոշում առավել մեծ հաճախականություն ունեցողները),
- ◆ վերլուծության տարրերի վերհանման դիագրամ (վերլուծության կառուցվածքային ներկայացում),
- ◆ գնահատման թերթիկներ (նախատեսված գործընթացում որոշ առաջադրանքների կատարման և դրանց որակի չափման իրականացում),
- ◆ բենչմարկինգ,
- ◆ Ուժ-Վ/SWOT (strengths, weaknesses, opportunities, threats) վերլուծություն:

Առավել մանրամասն անդրադառնալով վերջինին՝ այն ընդունելով որպես տարեկան հաշվետվության ձևավորման լավագույն միջոց:

SWOT վերլուծությունը կազմակերպության ներքին ուժեր և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների ուսումնասիրությունն է, ռազմավարական պլանավորման մեթոդ [3,4]: Ճիշտ կիրառելու դեպքում այն կարող է լիարժեքորեն ուրվագծել դասավանդման և ուսումնառության առկա պատկերը, մատնանշել այն բնագավառները, որոնք բարելավման, օժանդակության և զարգացման կարիք ունեն: Ամբիոնի մակարդակում կատարվող SWOT անալիզում հարկ է ընդգրկել հետևյալ

բնագավառները.

- ◆ ամբիոնի կրթական ներքին միջավայրը (կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ, ուսուցման կերպեր, մեթոդաբանություն, օր.՝ ուսանողակցեստրոն),
 - ◆ դասախոսական և օժանդակ աշխատակազմը,
 - ◆ ուսումնառության միջավայրը (լաբաներ, լաբորատորիաներ, սարքավորումներ, դիդակտիկ նյութեր),
 - ◆ ուսանողները (տեղացի, օտարերկրացի, առաջադիմություն, գնահատման մեթոդաբանություն),
 - ◆ ֆինանսական հնարավորությունները,
 - ◆ հետազոտական ծրագրերը,
 - ◆ հորիզոնական, ուղղաձիգ և երկայնաձիգ ինտեգրացիայի ապահովումը:
- SWOT-ից ակնկալվող արդյունքները կարելի է հակիրճ ձևակերպել հետևյալ կերպ.
- ◆ Ներքին թույլ կողմերի վերհանումը կբացահայտի այն բնագավառները, որոնց փոփոխությունները կնպաստեն ուսումնական գործընթացի բարելավմանը:
 - ◆ Վեր կհանվեն հսկողությունից դուրս մնացած ոլորտները (Դեմինգի շրջափուլի շրջանակում):
 - ◆ SWOT-ը ճանապարհ է բացում ամբիոնական նիստերում և այլ հավաքներում մտքերն ազատ փոխանակելու համար, շահառուներին մտածել է տալիս իրենց տեղի, անելիքները, պարտավորությունները կատարելու որակի մասին:
 - ◆ Վերհանում է ամբիոնների կարիքները, հնարավոր

րություն է տալիս հանդես գալու առաջարկություններով և վերադասի առջև ներկայացնելու համապատասխան հարցադրումներ ու պահանջներ:

- ❖ SWOT-ը հնարավորություն է տալիս ամբիոնական գործունեությունը առավել արդյունավետ ծավալելու՝ հիմք ընդունելով բժշկական բարձրագույն կրթության կազմակերպման ժամանակակից մոտեցումները (ինտեգրացիա, թյունինգ, ելքային կրթական արդյունքներից բխող ուսուցում, ուսանողակենտրոն դասավանդում): Վերջինս մշտադիտարկման միջոցով կհանգեցնի դասավանդման-ուսումնառության բոլոր օղակների բարելավման ուղիների քարտեզագրմանը և դրանց հասցեական իրագործմանը:

Ամփոփիչ դրույթներ

SWOT վերլուծության ձևաչափով տարեկան հաշվետվությունը վերածվում է վերլուծական զեկույցի, որի յուրաքանչյուր բաղադրիչ հարցադրումների համակարգ է:

Տարբեր բաղադրիչների վերաբերյալ ստացված և առավել հաճախ կրկնվող բացասական պատասխանը կարելի է խմբավորել ընդհանուր կարգերում: Այս մոդելի միջոցով հնարավոր է դառնում բացահայտել այն օբյեկտիվ և սուբյեկտիվ տվյալները, որոնք առավել հաճախ

են կրկնվում պատասխաններում՝ որպես հակասական կամ թերի: Հնարավոր է դառնում կրկնվող խնդիրների ուղղությամբ մեկ միասնական միջոցառում պլանավորել, ապագա գործողությունները մշակել:

Վստահ ենք, որ SWOT-ի՝ որպես ամբիոնի տարեկան հաշվետվության վերլուծական գործիքի կիրառումը կնպաստի դասընթացների որակի, կրթական կառուցվածքի, ուսանողակենտրոն ուսուցման բարելավմանը:

SWOT-ը հնարավորություն է տալիս ամբիոնում դասընթացի պահանջվող որակի ապահովումն իրագործելու հետևյալ ալգորիթմով (հիմնահարց, խնդրի լուծում հաջորդական քայլեր)։

Կրթական ծրագրի և ուսումնական պլանի կատարման ուսումնասիրություն → Բարելավման քայլեր → Արդյունքների գնահատում և վերլուծություն → Նոր խնդիրների սահմանում → Համապատասխան քայլերի մշակում

Միաժամանակ ընդգծենք, որ երբեք չպետք է մտածել, որ վերոբերյալ մեթոդաբանությունը կարող է լուծել ծառացած ակադեմիական բոլոր խնդիրները: SWOT-ը հարկ է դիտարկել այն գործիքների շարքում, որոնց միասնական կիրառումը կարող է հանգեցնել դրական փոփոխությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, Երևան, 2011, էջ 9-19:
2. Նպաստենք Բոլոնիայի գործընթացին Հայաստանում, Երևան, 2011, էջ 6-12:
3. Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույց, Երևան, 15-17 դեկտեմբեր,

2011, էջ 70-80:

4. Н.Д. Ющук, Ю.В. Мартинов, Непрерывное обучение врачей - требование современной практики здравоохранения. Медицинское образование и профессиональное развитие 1, 2013, стр. 21-22

РЕЗЮМЕ

“SWOT” КАК ЭФФЕКТИВНЫЙ ИНСТРУМЕНТ АНАЛИТИЧЕСКОГО ГОДОВОГО ОТЧЕТА КАФЕДРЫ

Навасардян Г.А., Аветисян С.А.

ЕГМУ, Учебно-методический совет

Ключевые слова: SWOT анализ, годовой отчет, обеспечение качества образования.

В статье обсуждается вопрос о роли SWOT анализа в альтернативной аналитической модели годового отчета кафедры.

SWOT анализ рассматривается как метод стратегического

планирования цели, организации учебного процесса на кафедре, выявления внутренних и внешних факторов, способствующих или препятствующих достижению цели.

Вышеуказанная методология в контексте Болонского процесса будет способствовать переходу от контроля к обеспечению качества высшего медицинского образования.

SUMMARY

SWOT AS AN EFFECTIVE TOOL FOR ANNUAL ANALYTICAL REPORT OF THE DEPARTMENT ACTIVITY

Navasardyan G.A., Avetisyan S.A.

YSMU, Academic-methodical council

Keywords: SWOT, annual report, education quality assurance.

The problem of the conceptual alteration model of the department annual report is discussed in this article. This serves as an additional mechanism for transition from education quality control to quality assurance within the context of the Bologna process, adopted as a policy by the University.

The report is to be presented in the form of analytical presentation, using the SWOT analytical method. It includes the goal of the presentation, elucidation of the weak and strong points, the inner and external factors, which either promote or complicate the process of the goal achievement.

ՅՏԴ.61 (071.1):614.2+61.001:378.18

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱԿԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԲԱԿԱԼԱՎՐՆԵՐԻՆ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայրապետյան Ա.Կ., Թադևոսյան Ա.Է., Սականյան Գ.Յ., Ազնաուրյան Ս.Ա., Սուքիասյան Ռ.Ռ., Մարկոսյան Ա.Մ., Վարուժանյան Յ.Ա., Հարությունյան Զ.Մ.

ԵՊԲՀ, հանրային առողջության և առողջապահության ամբիոն

Բանալի բառեր՝ բազային բժշկական բարձրագույն կրթություն, հանրային առողջություն, առողջապահություն, ուսանողների գիտահետազոտական աշխատանք, ուսանողների գիտելիքների ստուգում:

Բարձրագույն բժշկական կրթությունը պատմականորեն ձևավորված մասնագիտական տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ժառանգություն է, կուտակում ու վերարտադրությունն ապահովող սոցիալական ինստիտուտ է [1]: Անցած դարի 80-ական թվականների վերջից մինչ օրս ՀՀ բնակչության կյանքում դիտվող փոփոխությունները, երկրի անցումը շուկայական հարաբերություններին չէին կարող չանդադրաբար ինչպես երկրի ամբողջ տնտեսությանը, այնպես էլ նրա յուրաքանչյուր համակարգաստեղծ ոլորտին, այդ թվում բժշկական կրթության համակարգին:

Հարկ է նշել, որ բարձրագույն բժշկական կրթությունը՝ որպես համակարգ, պետք է լինի ճկուն և ժամանակին արձագանքի ոչ միայն առողջապահության ոլորտում կատարվող փոփոխություններին, այլև գործընթացներին, որոնք կատարվում են հասարակության կյանքի այլ ոլորտներում՝ գիտության, մշակույթի, տնտեսության, քաղաքականության: Փոփոխություններին համահունչ վերանայվում են բժիշկների պատրաստման բազային և հետդիպլոմային փուլերում դասավանդվող առարկաների ուսումնական ծրագրերը, դասավանդման ձևերն ու մեթոդները, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը: Ի դեպ, բժշկական բուհերում դասավանդվող առարկաներից առավել հաճախ և դինամիկ փոփոխվողը «Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում» ծրագիրն է [2], որի մասին են վկայում նախ և առաջ առարկայի անվանմանն ու մեթոդական ապահովմանը վերաբերող փոփոխությունները: Խիստ կարճ ժամանակահատվածում բազմիցս փոփոխվեց ամբիոնի անվանումը, ինչպես նաև դասավանդվող առարկաների անվանացանկը: Հետագայում, հաշվի առնելով բարձրագույն բժշկական կրթության համակարգի ուղղորդումը միջազգային չափորոշիչներով և կրթական ծրագրերի իրականացման ընթացքում կազմակերպչական բժշկական ուղղությունը, սոցիալական

բժշկության, առողջապահության տնտեսագիտության և կառավարման նշանակությունը, 2013-2014 ուսումնական տարվա սկզբում ամբիոնն ի վերջո վերանվանվեց «Հանրային առողջություն և առողջապահություն»: Վերոնշյալ հիմնախնդիրների տեսանկյունից հանրային առողջության և առողջապահության առջև դրված է մշտադաշտային պատրաստել մասնագետ, որը պետք է ունակ լինի փոփոխված պայմաններում գնահատելու և վերահսկելու բնակչության առողջության ձևավորման կարևոր գործոնները, մշակելու դրանց գիտական հիմունքներն ու կազմակերպելու առողջապահության համակարգի գործունեությունը՝ կյանքի նոր պայմաններին համահունչ:

Ներկայումս հանրային առողջությունը և առողջապահությունը՝ որպես գիտություն և դասավանդման առարկա, առաջատար տեղ է զբաղեցնում բժիշկների նախադիպլոմային պատրաստման ծրագրում և բժշկասոցիալական հետազոտություններում:

Այդպիսի գնահատականի հիմնավորվածությունն ապացուցվում է «Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում» առարկայի խնդիրներով՝

- ❖ բնակչության առողջության վիճակի և նրա վրա սոցիալական գործոնների ազդեցության ուսումնասիրություն,
- ❖ բնակչության առողջության ուսումնասիրության մեթոդաբանության մշակում,
- ❖ առողջապահության ոլորտում պետության բաղադրականության տեսական հիմնավորում,
- ❖ երկրում առողջապահության կազմակերպչական սկզբունքների մշակում,
- ❖ բուժկանխարգելիչ հիմնարկների և բժիշկների աշխատանքի կազմակերպչական ձևերի ու մեթոդների մշակում:

Վերոնշյալ խնդիրները լիարժեք լուծելու համար անհրաժեշտ է բժիշկների համապատասխան պատրաստում: Անցել են այն ժամանակները, երբ բժշկի մասնագիտական գնահատականը հիմնվում էր միայն նրա՝ որպես բուժող բժշկի պատրաստման վրա: Դեռևս XIX դարում հայտնի ռուս վիրաբույժ Ն. Ի. Պիրոգովը նշում էր, որ վիրաբուժության հաջողությունները պայ-

մանավորված են ծառայության կազմակերպման հաջողություններով: Ներկայումս էապես փոխվել են բժշկի աշխատանքի պայմաններն ու առանձնահատկությունները, բարձրացել են նրան ներկայացվող պահանջները: Ներկայիս բժիշկը դիտվում է որպես առնվազն 5 գլխավոր դերերի կատարող՝ անձ, որը ցուցաբերում է բուժօգնություն, ընդունում է որոշումներ, հասարակության առաջնորդ է, զբաղվում է սանիտարական լուսավորությամբ և առողջ ապրելակերպի քարոզարշավով, կոլեկտիվ է ղեկավարում: Այս առումով հանրային առողջության և առողջապահության ամբիոնի դերն առավել լիարժեք կարող է արտահայտվել հետևյալ ձևակերպումով. «Հանրային առողջության և առողջապահության ամբիոնը նպաստում է բժշկի անձի ձևավորմանը, ուսակությունների զարգացմանը մարդկանց առողջության պահպանման և ամրապնդման հիմնախնդիրները լուծելու համար, մտածելու ստեղծագործաբար, տրամաբանորեն և քննադատաբար» [3]:

Վերջին ժամանակաշրջանում հանրապետությունում դիտվող սոցիալ-տնտեսական բնույթի փոփոխությունները, առողջապահության համակարգի ապամենաշնորհումը, ոլորտի կառավարման ապակենտրոնացումը, շուկայական հարաբերությունների զարգացումը, առողջապահության ոլորտի արագընթաց առևտրականացումը, բնակչության առողջության վիճակի վատթարացումը ինքնին որպես պահանջ խիստ կարևորում են հանրային առողջության, առողջապահության կազմակերպման, կառավարման և տնտեսագիտության ոլորտներում բժիշկներ և առողջապահության կազմակերպիչներ պատրաստելու նշանակությունն ու անհրաժեշտությունը:

XXI դարի բժիշկը, անկախ ընտրած մասնագիտությունից, պետք է լավ տիրապետի կանխարգելման, բնակչության առողջության ուսումնասիրության մեթոդիկային, ունենա բավարար գիտելիքներ և օժտված լինի ունակություններով՝ ուղղված բժշկական ապահովագրության և ոլորտի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների առաջացման պայմաններում բժշկական հաստատությունների գործունեությանը և նրա վերլուծությանը, նոր կլինիկական կազմակերպական տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև կարողանա կազմակերպել բուժկանխարգելիչ հիմնարկի աշխատանքն ու ղեկավարել բուժաշխատողների կոլեկտիվը:

Ինչպես հայտնի է, մասնագետ պատրաստելու մակարդակը որոշող ամենակարևոր բաղադրիչներից է դասավանդվող առարկայի կառուցվածքն ու բովանդակությունը:

ԵՊԲՀ հանրային առողջության և առողջապահության ամբիոնում մշակված առարկայական ծրագրերով

աշխատանքի կիսամյակում ընդհանուր բժշկության ֆակուլտետի (ԸԲՖ) 4-րդ կուրսում երկու շաբաթ տևողությամբ ցիկլային պարապմունքներով դասավանդվում է «Հանրային առողջություն» առարկան՝ «Բժշկակենսաբանական վիճակագրություն» մոդուլի ներառմամբ (60 ժամ): Նույն ուստարվա գարնանային կիսամյակում մեկական շաբաթ տևողությամբ ԸԲՖ 4-րդ կուրսում դասավանդվում է «Առողջապահության կազմակերպում» մոդուլը (30 ժամ), իսկ ստոմատոլոգիական ֆակուլտետի (ՍՖ) 3-րդ կուրսում՝ «Ստոմատոլոգիական ծառայության կազմակերպում» առարկան: Ընդ որում, ՍՖ-ի ուսանողների համար դասընթացի տևողությունը, նախկինի համեմատությամբ կրկնապատիկ կրճատվելով, ներկայումս ընդամենը 30 ժամ է: «Ստոմատոլոգիական ծառայության կազմակերպում» մոդուլի շրջանակներում ուսանողները ստանում են գիտելիքներ միայն առողջապահության համակարգի կառուցվածքի, հիմնական գործառնությունների, զարգացած երկրներում գործող առողջապահության մոդելների առանձնահատկությունների, ստոմատոլոգիական ծառայության կազմակերպման և գործունեության վերաբերյալ: Ծրագրից ամբողջությամբ հանվել է «Կենսավիճակագրություն» բաժինը: Մինչդեռ ամբողջ աշխարհում առողջապահության համակարգի հաջող գործունեության կարևորագույն պայմաններից մեկը բժիշկների կենսավիճակագրության իմացությունն է: Կենսավիճակագրության գիտելիքներին տիրապետելը բժիշկներին հնարավորություն է ընձեռում օբյեկտիվորեն գնահատելու բժշկաժողովրդագրական իրավիճակը, բնակչության հիվանդացության հիմնախնդիրները, բուժկանխարգելիչ հիմնարկների գործունեությունը, ճիշտ մեկնաբանել և օգտագործել մասնագիտական գիտական գրականության տվյալները, ինչպես նաև հիմնավորված իրականացնել առողջապահության պլանավորման, տնտեսագիտության, մարկետինգի և մենեջմենթի հիմնախնդիրների լուծումները [5]:

Պետք է նշել, որ ուսումնական տարվա աշխատանքի կիսամյակում ԸԲՖ 4-րդ կուրսի խմբերն ընդամենը 10 օր տևողությամբ պարապմունքների յուրաքանչյուր 7-րդ օրը հանձնում են թեստային հարցում (50 հարց), իսկ ցիկլի վերջում՝ քննություն (100 հարց): Գարնանային կիսամյակում «Առողջապահության կազմակերպում» և «Ստոմատոլոգիական ծառայության կազմակերպում» առարկաներն ավարտվում են քննությամբ (50-ական հարց):

Ուսանողների գիտելիքների հաճախակի ստուգումները մի կողմից ուսանողների շրջանում առաջացնում են հոգեհուզական վիճակի արտահայտված լարվածություն և անբարենպաստ անդրադառնում ուսումնական գոր-

ծընթացի արդյունավետությանը, մյուս կողմից, խիստ ժամանակատար լինելով, սահմանափակում են հնարավորությունները ուսանողների կողմից ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում ամրապնդելու համար: Վերոնշյալով պայմանավորված՝ ուսանողների կողմից թերազնահատվում են ձեռք բերված գիտելիքների նշանակությունն ու ունակությունների ձևավորման կարևորությունը մասնագիտական պրատիկայում կիրառելու համար: Տեղին է նշել, որ հարցը հատկապես մտահոգիչ է «Կենսավիճակագրության հիմունքներ» առարկայի դեպքում: Այսպես՝ ասպիրանտների և հայցորդների՝ ամբիոնին հաճախակի դիմելը հետազոտության նյութերի վիճակագրական մշակման և վերլուծության հարցերը պարզաբանելու նպատակով վկայում են ոչ վաղ անցյալում նրանց կողմից յուրացրած գիտելիքներից ինքնուրույն օգտվելու դժվարությունների մասին: Պետք է նշել, որ թեև գործնական պարապմունքների ժամանակ ուսանողների կողմից ստացած տեսական գիտելիքներն ամրապնդվում են, այնուամենայնիվ դա չի վերաբերում ուսուցանվող նյութի բոլոր թեմաներին, սահմանափակվում է որոշ բաժիններից տիպական խնդիրների քննարկմամբ և պարզաբանմամբ, որոնք ներառում են պատրաստի ելակետային տվյալներ, հստակ առաջադրանքներ և ունեն միօրինակ լուծումներ: Սակայն դա չի կարող բավարար լինել, քանի որ բոլոնյան գործընթացի շրջանակներում բարձրագույն կրթության արդիականացումն իրականացնող պահանջներից մեկը ուսումնական գործընթացի առավելապես հետազոտական բնույթ ունենալու պահանջն է:

Ըստ միջազգային կրթության չափորոշիչների՝ բուհի շրջանավարտը ոչ միայն պետք է անհրաժեշտ մասյուն և մասնագիտական գիտելիքներ ունենա, այլև պատրաստ լինի ինքնուրույն գործունեություն ծավալելու անորոշ պայմաններում, պետք է կարողանա ընդունել ոչ միօրինակ որոշումներ, պետք է ակտիվ մասնակցի ներառական գործընթացներին, ձգտի ինքնակատարելագործվելու և ստեղծագործական ինքնաիրականացման: Վերոնշյալ հատկանիշները պետք է ձևավորվեն բուհում, առաջանան և զարգանան հետազոտական աշխատանքներին ուսանողների ակտիվ մասնակցության գործընթացում, որն այսօր բոլոր զարգացած երկրների բուհերում դարձել է մասնագիտական պատրաստման պարտադիր բաղադրիչ:

Մեր համալսարանում ուսանողների շրջանում հետազոտական աշխատանքի կազմակերպումը վերանայման կարիք ունի: Բոլոր, այդ թվում նաև հանրային առողջության և առողջապահության ամբիոնում գործում են ուսանողական գիտական խմբակներ, որոնց աշխատանքը ԵՊԲՅ ուսումնական գործընթացի հե-

տազոտական բաղադրիչն ապահովելու տեսանկյունից խիստ անբավարար է. ուսանողների մեծամասնությունը չի մասնակցում այդ աշխատանքներին և կամ որևէ հետաքրքրություն չի դրսևորում: Մինչդեռ մասնագիտական գրականության տվյալների համաձայն [4]՝ հետազոտական աշխատանքի ճիշտ կազմակերպումը կատարում է հետևյալ կարևոր գործառնությունները՝

- ◆ կրթական՝ տեսական և գործնական գիտելիքների ձեռքբերում,
- ◆ կազմակերպա-կողմնորոշիչ՝ մասնագիտական գրականության սկզբնաղբյուրներում կողմնորոշվելու ունակության ձևավորում, գործունեության կազմակերպման և պլանավորման ունակությունների զարգացում,
- ◆ մոտիվացիոն՝ գիտահետազոտական գործունեության ընթացքում գիտության նկատմամբ հետաքրքրության, ուսումնասիրվող ոլորտի հիմնախնդրին ավելի խոր ծանոթանալու ցանկության առաջացում և զարգացում, ինքնակրթության, ինքնազարգացման խթանում,
- ◆ զարգացնող՝ քննադատական, ստեղծագործական մտածելակերպի, ստանդարտ և ոչ ստանդարտ վիճակներում գործելու և սեփական տեսակետը պաշտպանելու ունակության զարգացում,
- ◆ դաստիարակչական՝ բարոյական և իրավական ինքնագիտակցության, համապատասխան ինքնազնահատման, պատասխանատվության զգացումի, նպատակաուղղվածության, դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ վճռականության և բնավորության դրական այլ գծերի ձևավորում:

Չարկ է նշել, որ ոչ վաղ անցյալում ամբիոնում որպես հետազոտական աշխատանք «Առողջապահության կազմակերպում» առարկայի դասավանդման շրջանակներում անգլալեզու ուսանողներին առաջադրվում էր գեկուցումներ պատրաստել տարբեր երկրներում գործող առողջապահության համակարգի վերաբերյալ: Նրանց կողմից ինքնուրույն ուսումնասիրվում և վերլուծվում էին կոնկրետ երկրների առողջապահության համակարգերին վերաբերող մասնագիտական գրականության տվյալները, պարզաբանվում էին առողջապահության գործող մոդելների առանձնահատկությունները, դրական և բացասական կողմերը:

Որպես հետազոտական աշխատանք ամբիոնը կարող է ուսանողներին առաջադրել նաև տարբեր երկրների օրինակներով ուսումնասիրել և վերլուծել բնակչության բժշկաժողովրդագրական, ինչպես նաև բժշկասոցիալական հիմնախնդիրները: Այդպիսի աշ-

խատանքը նախատեսում է ուսանողի կողմից հետևյալ գործողությունների ինքնուրույն կատարում՝ գրականության փնտրում և ուսումնասիրում, անհրաժեշտ տվյալների հավաքում, մշակում և վերլուծություն, ստացված արդյունքների գնահատում և ամփոփում՝ բանավոր գեկուցումներ կարդալով:

«Կենսավիճակագրության հիմունքներ» առարկայի դասավանդման շրջանակներում ուսանողներին հնարավոր է առաջադրել, օրինակ, բժշկական գիտական հոդվածների քննադատական վերլուծական աշխատանք, որի ընթացքում ուսանողները պետք է գնահատեն հիմնախնդրի ուսումնասիրության համար հոդվածի հեղինակի կողմից ընտրված հետազոտության դիզայնի, վիճակագրական մեթոդների, ստացված արդյունքների մեկնաբանման ճշտությունը, ձևակերպված եզրակացությունների և առաջարկությունների համապատասխանությունը այդ արդյունքներին: Հոդվածների վերլուծության արդյունքները նույնպես կարող են ներկայացվել բանավոր գեկուցմամբ, որը նպաստում է հարցի ինտերակտիվ և գիտական քննարկումների ծավալմանը:

Պետք է ընդգծել, որ առաջադրված հետազոտական աշխատանքների արդյունքները բանավոր ներկայացնելը հնարավորություն կտա ուսանողներին ձեռք բերելու անհրաժեշտ հմտություններ գիտական գեկուցումներ պատրաստելու, ներկայացնելու համար, հանրության առջև հանդես գալու բանավոր խոսքով, ինչպես նաև վարելու գիտական քննարկումներ:

Այսպիսով, հետազոտական բաղադրիչը ապահովելու համար անհրաժեշ է վերանայել ուսանողների գիտելիքների ատեստավորման ձևերն ու դրանց հաճա-

խականությունը՝ ելնելով դասավանդվող առարկաների առանձնահատկություններից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ամբիոնը նպատակահարմար է գտնում ուսումնական տարվա աշնանային կիսամյակում ԸԲՖ 4-րդ կուրսի բակալավրների գիտելիքներն ատեստավորել երկու բաղադրիչի՝ հետազոտական աշխատանքի վերաբերյալ բանավոր գեկուցման և անցած տեսական նյութից թեստային հարցման (50 հարց) արդյունքներով, իսկ զարնանային կիսամյակում ցիկլային պարապմունքների վերջին օրն ուսանողի գիտելիքներն ատեստավորել ամբողջ առարկայից (աշնանային և զարնանային կիսամյակներում անցած տեսական նյութից) համակարգչային քննության (100 հարց) արդյունքների հիման վրա:

Կարևորելով ժամանակակից պայմաններում կենսավիճակագրության աճող դերը բոլոր, այդ թվում բժիշկ-ստոմատոլոգների գիտական և պրակտիկ գործունեության մեջ՝ ամբիոնը նպատակահարմար է գտնում և առաջարկում ստոմատոլոգիական ֆակուլտետում վերականգնել «Կենսավիճակագրության հիմունքներ» առարկայի ուսուցումը:

Այսպիսով, բարձրագույն բժշկական կրթության արդիականացման շրջանակներում ԵՊԲՀ-ում կատարվող փոփոխությունները, որոնք պայմանավորված են առարկայական ծրագրերի, ուսանողների գիտելիքների ատեստավորման ձևերի և մեթոդների վերանայմամբ և ուսանողների հետազոտական բաղադրիչի ապահովմամբ, կնպաստեն ինչպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության բարելավմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Смирнов С. Д. Педагогика и психология высшего образования: от деятельности к личности. М.: Высшее образование, 1995. - 241 с.
2. Кича Д.И. О проблемах преподавания вопросов здоровья населения и здравоохранения. // Проблемы социальной гигиены и история медицины, 2001, N 1. - С. 33-36.
3. Сиротко М.Л., Сапрыкина А.Г. Психолого-педагогические акценты в методике преподавания общественного здоровья и здравоохранения. // Сб. научных трудов «Естествознание и гуманизм», 2007. -Том 4. - Выпуск 1. - С. 24-26.
4. Чупрова Л. В. Научно-исследовательская работа студентов в образовательном процессе вуза // Теория и практика образования в современном мире: материалы междунар. науч. конф. СПб.: Реноме, 2012. - С. 380-383.
5. Lwanga S.I., Cho-Yook T. Teaching health statistics. WHO, 1999.

РЕЗЮМЕ

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ УЧЕБНОГО ПРОЦЕССА В РАМКАХ ПОДГОТОВКИ БАКАЛАВРОВ НА КАФЕДРЕ ОБЩЕСТВЕННОГО ЗДОРОВЬЯ И ЗДРАВООХРАНЕНИЯ

Айрапетян А.К., Тадевосян А.Э., Саканян Г.Г., Азнаурян С.А., Сукиасян Р.Р., Маркосян А.М., Варужанян А.А., Арутюнян Дж.М.
ЕГМУ, Кафедра общественного здоровья и здравоохранения

Ключевые слова: базовое высшее медицинское образование, общественное здоровье, здравоохранение, научно-исследовательская работа студентов, проверка знаний студентов.

В соответствии с современными требованиями международных стандартов в области образования, выпускник медицинского вуза должен не только обладать необходимым багажом фундаментальных и специальных знаний, но и быть готовым к самостоятельной деятельности в условиях неопределенности, принимать нестандартные решения, стремиться к самосовершенствованию и творческой самореализации. Возникновению и развитию указанных способностей способ-

ствует активное участие студента в научно-исследовательской работе. В качестве научно-исследовательской работы студента кафедра предлагает самостоятельное изучение студентами современных медико-социальных проблем или проведение анализа научной статьи в области медицины и представление полученных результатов в виде презентации. Подобная работа студентов будет способствовать не только развитию у них вышеперечисленных способностей, но и приобретению ими навыков подготовки и представления научной презентации, ведения научных дискуссий.

SUMMARY

WAYS OF UNDERGRADUATE EDUCATIONAL PROCESS IMPROVEMENT AT THE DEPARTMENT OF PUBLIC HEALTH AND HEALTH CARE

Hayrapetyan A.K., Tadevosyan A.E., Sakanyan G.G., Aznauryan S.A., Suqiasyan R.R., Markosyan A.M., Varuzhanyan H.A., Harutyunyan J.M.
YSMU, Department of Public Health and Health Care

Keywords: undergraduate higher medical education, public health, health care, student research, knowledge assessment.

According to the international educational standards, graduates of medical schools must not only have fundamental and special knowledge but also be able to work independently in the conditions of uncertainty, make non-standard decisions, aimed at self-perfection and creative self-actualization. Students' active

participation in a research study contributes to the development of the mentioned skills. As a research, study of contemporary public health problems or critique of scientific medical article with oral presentation of obtained results might be suggested. Such work will contribute to the development of the above mentioned abilities, as well as to the acquisition of skills required for a good oral presentation, scientific debates.

Հեղինակ	Էջ
Ազնաուրյան Ս.Ա.	101
Ավագյան Ա.Վ.	65
Ավետիսյան Ս.Ա.	98
Գալստյան Լ.Կ.	85
Թադևոսյան Ա.Է.	101
Խանդանյան Գ.Լ.	39, 48
Խաչիկյան Ն.Զ.	85
Հայրապետյան Ա.Կ.	101
Հարությունյան Զ.Ս.	101
Մահավիր Սենան	10
Մարկոսյան Ա.Ս.	101
Մկրտյան Հ.Հ.	65
Մկրտչյան Ս.Հ.	85
Նավասարդյան Գ.Ա.	98
Սականյան Գ.Հ.	101
Սիրականյան Լ.Հ.	88, 94
Սուքիասյան Ռ.Ռ.	101
Վարուժանյան Հ.Ա.	101
Քոչարովա Ս.Գ.	85
Աვაքյան Շ.Ա.	53
Ավետիսյան Ա.Ա.	29

Հեղինակ	Էջ
Ագաջանով Մ.Ի.	22, 53
Ագաջանովա Ե.Մ.	53
Ազատյան Վ.Ե.	29
Այրապետյան Լ.Գ.	32
Առաքյան Կ.Ա.	3
Վարդանյան Գ.Շ.	22
Դեմիրճյան Յ.Մ.	69
Դավթյան Դ.Լ.	69
Եսայան Լ.Կ.	29
Զիլֆյան Ա.Վ.	53
Օսեթյան Մ.Յ.	58
Օհանեսյան Մ.Գ.	75, 81
Սոսոյան Գ.Մ.	15
Սոսոյան Յ.Մ.	3
Տարանյան Ա.Վ.	22
Թադևոսյան Ա.Գ.	32
Պապուրյան Ա.Շ.	3
Շալալյան Ա.Լ.	22
Շարմանյան Լ.Ա.	29
Շեքոյան Վ.Ա.	15
Շմանյան Մ.Վ.	29

